

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ԻԴ. ՏԱՐԻ ԹԻԻ 28 (1728) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 25, 2015
VOLUME 35, NO. 28 (1728) SATURDAY, JULY 25, 2015



Պաշտօնաթերթ՝
Ս. Գ. Հնչակեան Կուսակցության
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

Հայաստանի Նոր Սահմանադրութիւնը Իրաւունք Կու տայ Անհրաժեշտութեան Պարագային Անհատին Ջրկել Կեանքէն

Ընդդիմադիրները «խայտառակութիւն» կը որակեն նոր Սահմանադրութեան նախագիծին մէջ մարդուն կեանքէն զրկելը որոշ պարագաներուն սահմանադրականացնող դրոյթը՝ համոզմունք յայտնելով, որ այդպիսով նոր «Մարտի 1»-երը օրինականացնելու հիմք կը դրուի:

Սահմանադրութեան բարեփոխող նախագիծի 23-րդ յօդուածը կը վերաբերի կեանքի իրաւունքին. առաջին կէտով նշուած է, որ «Իւրաքանչիւր ոք ունի կեանքի իրաւունք», իսկ երկրորդ կէտով սահմանուած է. - «Կեանքից զրկելը չի համարուում սոցիալական յօդուածի խախտում, եթէ այն հետեւանք է այնպիսի ուժի գործադրման, որը բացարձակապէս անհրաժեշտ է»:

Իսկ որ պարագաներուն սպանութիւնը կրնայ դառնալ բացարձակ անհրաժեշտութիւն, փաստաթուղթին մէջ չէ ըսուած:

Նախագիծի հեղինակները չեն կարծեր, որ այս դրոյթը կրնայ կամայականութիւններու առիթ տալ:

«Ձի կարելի պնդել, որ մենք սպանութիւնը լեգիտիմացնում ենք ոչ օրինական նպատակներով», - լրագրողներուն հետ հանդիպմանը ըսած է սահմանադրագէտ Վարդան Պօղոսեանը:

Այժմ գործող Սահմանադրութեան մէջ նման դրոյթ գոյութիւն չունի եւ սահմանուած է մարդու կեանքի անվերապահ իրաւունքը:

Սահմանադրութեան հեղինակները կը բացատրեն որ, եւրոպական Ուխտը եւս որոշ պարագաներուն կեանքէն զրկելը կը թոյլ-

տարէ եւ զարգացած երկիրներին մայր օրէնքներուն մէջ ալ կայ այդ:

Ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին հակադարձեց, թէ արեւմտեան զարգացած երկիրներուն մէջ ընտրութիւնները կեղծելու պատճառով ժողովուրդը փողոց դուրս չի գար եւ ոչ օրինական իշխանութիւններուն դէմ չի պայքարիր, այդ երկիրներուն մէջ ցուցարարներ սպաննելու սովորութիւն չկայ:

Մարտիրոսեանի կարծիքով, եւ՛ այս դրոյթը, եւ՛ առհասարակ Սահմանադրութեան ամբողջ նախագիծը միտուած են մէկ ինդիք լուծելու. - «Սերժ Սարգսեանի եւ Հանրապետական կուսակցութեան միասնական, երկարաժամկէտ իշխանավարմանը»:

Իսկ Հայ ազգային գոնկրէսի փոխնախագահ Լեւոն Զուրաբեանի կարծիքով, պետական մարմիններուն կը տրուի իրաւունք մը եւ իրենք առանց որեւէ սահմանափակման, այն ժամանակ, երբ գտնեն, որ բացարձակ անհրաժեշտութիւն է, կրնան մարդուն զրկել կեանքէն: «Սա մի խայտառակ բան է: Սա մարդասպանների Սահմանադրութիւն է», - ըսած է Զուրաբեան:

Իրաւապաշտպան Վարդան Յարութիւնեանի կարծիքով եւս, մարդուն կեանքէն զրկելը չունի որեւէ արդարացում՝ ինչ հիմնաւորումներ ալ տրուին. - «Չեմ ցանկանում

Շարք էջ 4

Հայաստանն Ու Եւրոպական Միութիւնը Աւարտած Են Նոր Համաձայնագրի Նախնական Բանակցութիւնները



Տոնալտ Թուսքի եւ Սերժ Սարգսեան Երեւանի մէջ կայացած միատեղ ասուլիսի ժամանակ

Երեւան այցելութեան ընթացքին նախագահ Սերժ Սարգսեանի հետ միատեղ ասուլիսի ժամանակ Եւրոպական խորհուրդի նախագահ Տոնալտ Թուսք յայտարարեց, որ Հայաստանն ու Եւրոպական Միութիւնը աւարտած են նոր եւ համապարփակ համաձայնագրի նախնական բանակցութիւնները:

Հայաստան որոշած է չօգտուել ԵՄ-ի հետ ընկերակցութեան հետ համաձայնագիր կնքելու առաջարկէն՝ ներառեալ խոր եւ համապարփակ ազատ առեւտուրի մասին համաձայնագիրը: «ԵՄ-ն ամբողջութեամբ կը յարգէ այդ որոշումը»,- ըսած է Թուսք:

Եւրոպական խորհուրդի նախագահը յայտնած է, որ ԵՄ-ն պատրաստ է աջակցելու Հայաստանին բարեփոխումներու, ազատ շուկաներու հասանելիութեան, գործարար միջավայրի համար միջավայրի բարելավման ու ներդրումներու, ինչպէս նաեւ կայուն զարգացման հարցերով:

Տոնալտ Թուսք շեշտած է որ, բոլոր պարագաներուն տակ, ԵՄ-ն հաւատարիմ կը մնայ շարք մը քաղաքական ու տնտեսական բա-

Շարք էջ 4

Նալբանդեան. «Պարուից Կրկին Հնչում Է Ռազմատենչ Հռետորաբանութիւն»

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խորհրդի համանախագահներ՝ Իկոր Պոպովին, Ջէյմս Ռոբերթսին, Փիէր Անտրիոյին եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անճյ Կասպչիկին:

Հանդիպման ընթացքին շարունակուեցան քննարկումները՝ դարաբաղեան հարցի խաղաղ կարգաւորման գործընթացի շուրջ: Համանախագահները նախարար Նալբանդեանին ներկայացուցին Ուաշինկթընի եւ Մոսկուայի մէջ իրենց ունեցած հանդիպումները եւ անդրադարձան մինչեւ տարեկան իրենց ծրագիրներուն:

Էդուարդ Նալբանդեան, ընդգծելով, որ Եւրոպական խաղաղութեան յետոյ Պաքոէն կրկին կը հնչեն է ռազմատենչ հռետորաբանութիւն եւ կը կազմակերպուին սադրանքներ եւ համանախագահներու ու շարունակութիւնը հրաւիրեց վերջին օրերուն ատրպէյճանա-դարաբաղեան շփման գիծի ամբողջ երկայն-

քով ատրպէյճանական զինուժերու կողմէ տարբեր չափի զինատեսակներով հրադադարի խախտումներուն վրայ: Նախարար Նալբանդեանի բնորոշմամբ՝ Պաքոէն սպառնալուցողական վարքագիծը կը վտանգէ բանակցային գործընթացը առաջ մղելու՝ Հայաստանի եւ եռանախագահ երկիրներու ջանքերը:

Միւս կողմէ, Ղարաբաղի Պաշտպանութեան Բանակի մամուլի խօսնակ Սենոր Հասրաթեան «Ազատութիւն» ռատիոկայանին հաղորդած է որ, վերջին օրերու ատրպէյճանական գործողութիւններուն տրուած պատասխանէն ետք հակառակորդը լռած է:

«Ատրպէյճանն անընդհատ փորձում է միջազգային հանրութեանը ցոյց տալ, որ պատերազմական գործողութիւնները դեռ աւարտուած չեն, որ Ատրպէյճանը մարտադաշտում դեռ ասելիք ունի», - ըսած է Սենոր Հասրաթեան, ընդգծելով, որ Ղարաբաղի Պաշտպանութեան Բանակը բոլոր ոտնձգութիւններուն պիտի պատասխանէ շատ խիստ:

Պէյրուի Սահակեան Վարժարանի 13-Ամեայ Ուսանողուհին Կը Բարձրանայ Արարատ Լեռ

«Դէպի Արարատ, Սահակեանի Համար» խորագրին տակ, Պէյրուի Սահակեան վարժարանի ուսանողուհի, 13 տարեկան Ծովակ Քէօշկէրեան բարձրացած է Արարատ լեռան վրայ:

Ծովակի այս արկածախնդրական ուղեւորութիւնը կը հետապնդէ երկու գլխաւոր նպատակ՝ անհատական եւ բարեսիրական: Անհատական առումով Ծովակ կը փորձէ դառնալ Արարատ լեռան զագաթը՝ նուաճող կրտսերագոյն աղջիկը, իսկ բարեսիրական առումով ան յայտարարած է նուիրահաւաք՝ ի նպատակ Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոլէճի աշակերտներու նպաստներու ֆոնտին:

Հայաստանի մէջ քանի մը օր առաջ նուաճելէ ետք Արագած լեռան զագաթը՝ որպէս վերջին փորձ, Ծովակ Քէօշկէրեան, Սահակեան Գոլէճի տնօրէն Ընկ. Նագօ ձէրէճեան եւ տարբեր երկիրներէ ժամանած հայ լեռնագնացներու խումբ մը երեք հանգրուաններով բարձրացան Արարատ լեռը: Առաջին փուլին, Ծովակն ու իր ընկերակիցները հասան 3300 մետր



Ծովակ Քէօշկէրեան եւ Նագօ ձէրէճեան Արարատի գագաթին

բարձրութեան վրայ գտնուող առաջին բանակավայր, իսկ ամբողջացաւ խումբի ուղեւորութեան երկրորդ հանգրուանը՝ դէպի 4200 մետր վրայ գտնուող երկրորդ բանակավայրը:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սերժ Սարգսեանի հրաժեշտի առաջարկը

ՅԱԿՈՐ ԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանն աստիճանաբար ներքաշուծ է սահմանադրական բանավեճի մէջ: Սահմանադրութեան փոփոխութեան նախագծի հրապարակուած դրոյթներն արժանանում են տարբեր գնահատականների, որոնք բաժանուած են դէմ եւ կողմ դիրքորոշումների:

Դէմ դիրքորոշման կրողներն ընդհանուր առմամբ արձանագրում են, որ նախագիծը վկայում է Սահմանադրութեան փոփոխութեան՝ իշխանութեան վերարտադրութեանը միտուած լինելը, իսկ կողմ դիրքորոշում արտայայտողները փորձում են համոզել, որ փոփոխութիւնը պէտք էր Հայաստանին:

Ճշմարտութիւնը թերեւս մէջտեղում է: Հին Սահմանադրութիւնը, թէ առաջին, թէ 2005-ին փոփոխուած տարբերակով, իշխանութեանը չի խանգարել վերարտադրուել երկու տասնամեակ շարունակ, սկսած 1995 թուականից: Չէր խանգարի նաեւ առաջիկայում: Խնդիրը վերարտադրութիւնը չէ:

Անկասկած է, որ Սերժ Սարգսեանը փոփոխութեան մեխանիզմով փորձում է հասնել իշխանութեան մէջ տարբեր կենտրոն-հակակշիռների ձեւաւորման, ինչը հնարաւորութիւն կը տայ ՀՀ-ն ամբողջով որպէս իշխանական միասնական հարթակ, որտեղ լուծուած են բոլոր խնդիրները, որն իրացնում է դէ ֆակտո իշխանութիւնը եւ որի նախագահն էլ դառնում է իշխանութեան դէ ֆակտո ղեկավարը:

Այդպիսով, իրականութեանը շատ մօտ է գնահատականը, որ Սահմանադրութեան փոփոխութիւնը Սերժ Սարգսեանը կատարում է իր անձնական իշխանութեան վերարտադրութեան համար: Բայց, այստեղ առկայ է կարեւոր նրբերանգ, որը պէտք է թողնել ուշադրութիւնից դուրս:

Սերժ Սարգսեանը չի կարող իր անձնական իշխանութեան վերարտադրութեան հարց լուծել առանց համակարգային իշխանութեան խնդիրը լուծելու: Համակարգը կարող է նրան օգնել լուծել անձնական իշխանութեան հարց, առանց դրա Սարգսեանը այդ հարցը լուծել անկարող է: Փաստացի, Սահմանադրութեան փոփոխութիւնը Սերժ Սարգսեանի առաջարկն է իշխող համակարգին, որի դիմաց նա այդ համակարգից հայցում է անձնական իշխանութեան պահպանում:

Կը տա՞ց համակարգն այդ համաձայնութիւնը, թէ ոչ: Սահմանադրութեան փոփոխութեան գործընթաց կոչուածը մեծ հաշուով կատարուելու է հենց այդ խնդրի առանցքում: Եթէ համակարգը Սերժ Սարգսեանին տուեց այդ համաձայնութիւնը, ապա դա էլ մեծ հաշուով չի երաշխաւորում նրա եւ յաւերժ իշխանութիւն: Դա համակարգի իշխանութիւնն է, եւ եթէ Սարգսեանը դուրս իսկ չբաւարարեց համակարգի ակնկալիքները, նա կը հե-

ռացուի, այնպէս, ինչպէս հեռացուեցին թէ Տէր-Պետրոսեանը, թէ Ռոբերտ Քոչարեանը՝ ամէն մէկը իւրովի եւ ուրոյն մեխանիզմով:

Նրանք, փաստացի, հանդէս չեկան համակարգի իշխանութիւնը պահպանելու առաջարկով: Տէր-Պետրոսեանը կամ չէր մտածում այդ մասին եւ համարում էր, որ «համակարգովի պէտք է խնդրեն» իր նման իմաստուն մարդուն մնալ նախագահ եւ ապահովել միջազգային լեգիտիմութիւն, կամ պարզապէս չհասցրեց նախագահութեան երկրորդ ժամկէտը սպառելուն ընդառաջ ձեւակերպել իր առաջարկը:

Ռոբերտ Քոչարեանի առաջարկն աւելի բազմաշերտ ու հետաքրքրական էր: Նա ձեւաւորեց ԲՀԿ-ն, վարդան Օսկանեանի միջոցով մէջտեղ բերեց «երկրորդ սերնդի բարեփոխումների» գաղափարը, ինչն իշխող համակարգը փաստացի ընդունեց որպէս մարտահրաւէր ու մերժեց այն: Քոչարեանի առաջարկը, փաստացի, Հայաստանի անկախութեան քառորդ դարի ընթացքում թերեւս իշխանութեան խնդրի լուծման ամենաարդիական առաջարկն էր: Քոչարեանը փորձում էր իր հեռանալու հետ մէկտեղ հեռացնել նաեւ այն համակարգը, որտեղ ինքը նախագահ էր նշանակուել, փոխարինել ձեւաւորել իր համակարգը, որտեղ կարող էր նաեւ չունենալ որեւէ բարձր պաշտօն, բայց լինել այդ նոր համակարգի «պատրիարքը»: Իհարկէ, համակարգի փոփոխութիւնը նրա առաջարկում կրում էր առաւելապէս կոսմետիկ բնույթ:

Սերժ Սարգսեանը, որը մեծ հաշուով առանցքային ղերակատարում է ունեցել երկու նախագահներին էլ ճանապարհելու հարցում, իր այսպէս ասած «հրաժեշտի» առաջարկում առանցքային տեղ տալիս է համակարգին: Նա փաստացի առաջարկում է «չբաժանուել» խաղաղ: Համակարգն օժտուած է իշխանութեան մի քանի կենտրոնով, այսինքն դէ իւրէ իշխանութիւնն է վերաբաշխուած եւ բաժին հասնում մի քանի կեդրոնների: Եթէ մինչ այս, այդ իշխանութիւնն առաւելապէս մէկ կեդրոնում է, եւ համակարգի տարբեր բեւեռները եւ թեւերը մեծ հաշուով լինելով յենասիւն, այդուհանդերձ կախուած են այդ մէկ կեդրոնի սահմանադրական լիազօրութիւնից, ապա Սարգսեանի առաջարկով նրանք միմիանց միջեւ բաժանում են այդ լիազօրութիւնները, իսկ առաջարկի համար Սերժ Սարգսեանին «վճարում» ՀՀ նախագահի պաշտօնով:

Ամբողջ հարցն այն է, թէ արդեօք դա այն առաջարկներից է, որից սովորաբար չեն կարողանում հրաժարուել, թէ՛ իշխող համակարգը կարող է եւ մերժել Սերժ Սարգսեանին: Առաւել եւս, որ համակարգի որոշ հատուածներ մեղմ ասած բոլորովին ոգեւորուած չեն Սերժ Սարգսեանի դէ ֆակտո չհեռանալու հաւանականութեամբ:

«ԼՐԱԳԻՐ»

Ինտրիգը գնալով մեծանում է

ԴԱԻԻԹ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Սահմանադրական փոփոխութիւնների ինտրիգը գնալով աւելի ու աւելի է մեծանում՝ առաջ բերելով մի շարք հարցեր, որոնց պատասխանն այս պահին խիստ մշուշոտ է: Ի սկզբանէ համընդհանուր տպաւորութիւն կար, թէ սահմանադրական բարեփոխումների նախաձեռնութեան բուն նպատակը սեփական իշխանութեան վերարտադրումն ու կոնկրետ Սերժ Սարգսեանի ղեկավարման ժամկէտի երկարաձգումն է: Քանի որ գործող սահմանադրութեամբ Սերժ Սարգսեանին կրկին նախագահ դառնալու իրաւունք վերապահուած չէ, նա ստեղծում է ուժեղ վարչապետի ինստիտուտ, որպէսզի երկրի ղեկը պահի վարչապետի պաշտօնով:

Իսկ ղեռեւս ամիսներ առաջ Սերժ Սարգսեանի արած յայտարարութիւնը, թէ ինքը սահմանադրական փոփոխութիւններից յետոյ նախագահի կամ վարչապետի աթոռին չի յաւակնելու, ուղղակի քաղաքական բլեֆ է եղել: Սա առաւել տարածուած մտայնութիւն էր, որը սահմանադրական բարեփոխումների գլխաւոր ինտրիգն էր՝ յամենայն դէպս մինչեւ երէկ: Նախօրէին՝ ՀՀ խորհրդի նիստի ժամանակ, որտեղ ներկայացուել է սահմանադրական բարեփոխումների նախագիծը, Սերժ Սարգսեանը վերահաստատել է, որ Սահմանադրութիւնը փոխելուց յետոյ ինքը Ազգային ժողովի նախագահ չի դառնալու:

Կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանը լրագրողների հետ զրոյցում փոխանցելով Սերժ Սարգսեանի խօսքը, յիշեցրել է, որ աւելի վաղ նախագահը յայտարարել էր նաեւ, որ իր երկրորդ պաշտօնավարումից յետոյ չի ձգտելու ոչ վարչապետի, ոչ էլ նախագահի պաշտօնին: «Նոր Սահմանադրութիւնը հերքեց կարծիքը, թէ գործող նախագահն իր վերարտադրութեան հարցն է լուծում: Եթէ անգամ չխօսենք նախագահի քաղաքական յայտարարութեան մասին, որ չի պատրաստուած զբաղեցնել վարչապետի կամ նախագահի պաշտօնը, այսօր յատուկ թերահաւատների համար նա յայտարարեց, որ, իհարկէ, Ազգային ժողովի նախագահի պաշտօնը եւս չի զբաղեցնի: Հետեւաբար, սա վերարտադրութեան ցանկութեան մասին չի խօսում», - ասել է Յարութիւնեանը: Հիմա հարց՝ իսկ ո՞վ է այդ դէպքում դառնալու վարչապետ, Աժ նախագահ կամ նախագահ: Ո՞ւմ է այս պոստերում պատկերացնում Սերժ Սարգսեանը, ո՞ւմ է նա պատրաստուած փոխանցել իշխանութիւնը: Եթէ առաջարկուող սահմա-

նադրական փոփոխութիւններով ստեղծուելու է երկկուսակցական խորհրդարան, Աժ-ում տեղ են ունենալու առաւել շատ ձայն ստացած երկու քաղաքական միաւորումները կամ ուժերը: Եթէ տեսականօրէն ընդունենք, որ իշխանութիւնն առաջին տեղում պետականացնում է կրկին ՀՀԿ-ին, ապա քաղաքական համակարգի ներկայ իրավիճակն այնպիսին է, որ երկրորդ քաղաքական ուժը չի ուրուագծուած: Մինչեւ ԲՀԿ-ի լուծարումն ու Գազիկ Ծառուկեանի քաղաքական համակարգից հեռացումը, երկրորդ ուժի կարգավիճակը վերապահուած էր ԲՀԿ-ին: Ծառուկեանի հեռացման օպերացիայի նախաձեռնումից յետոյ ակնյայտ դարձաւ, որ Սերժ Սարգսեանի համար անընունելի է ԲՀԿ-ի երկրորդ ուժ լինելու իրողութիւնը: Միւս քաղաքական ուժերը, գոնէ այս պահին, երկրորդ պատուաւոր տեղը (ակնաջղ կանչի Շարմազանով) զբաղեցնելու իրական պոտենցիալ չունեն: Ըստ էութեան սահմանադրական փոփոխութիւնների գործընթացին զուգահեռ քաղաքական դաշտի վերադասաւորում է ընթանալու. սա արդէն դառնում է հրամայական:

Այս բոլոր հարցերի պատասխանի անորոշութիւնը պայմանաւորում է քաղաքական ինտրիգի մեծութիւնը: Ըստ էութեան անգամ քաղաքական դաշտում խաղացողների համար յստակ չէ, թէ իրականում ի՞նչ է թագնուած բարեփոխումների հետեւում: Առայժմ ինտրիգը հասունանում է, մինչեւ որ մի օր կը պայթի:
«ՀԱՅԵԼԻ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալստիկումներն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շարաքաթերթին

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
email: massis2@earthlink.net

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փորձագետ. «Խորհրդարանում կարող է Ձեւաւորուել Անկառավարելի Եւ Անվերահսկելի Սեծամասնութիւն

Միջազգային իրաւունքի մասնագետ, իրաւաբան Արա Ղազարեանը լուրջ ռիսկեր է տեսնում Սահմանադրութեան նախագծում խորհրդարանի կայուն մեծամասնութեանը եւ ընտրութիւնների երկրորդ փուլին վերաբերող դրոյթներում:

Սրանք այն դրոյթներն են, որոնք, ինչպէս յայտնի է, լրջօրէն մտահոգել են նաեւ ընդդիմադիրներին: Նրանք պնդում են, որ սա պառլամենտարիզմի պատմութեան մէջ աննախադէպ երեւոյթ է, որ այդ դրոյթները կոչուած են խորհրդարանում «երաշխաւորել Հանրապետական կուսակցութեան ապահովագրուած մեծամասնութիւնը ցանկացած պարագայում»:

«Դա վտանգաւոր կը լինի, որովհետեւ մենք չունենք քաղաքական մշակոյթ, այն մշակոյթը, որ անհրաժեշտ կը լինի նման կայուն մեծամասնութեանը գապելու [համար]: Ունենալով անցած քսան տարուայ ժառանգութիւնը, ունենալով «Յաղթողին՝ ամէն ինչ» լոզունգ մեր թիկունքում, ունենալով ժողովրդավարութեան որոշ նուաճումները, բայց նաեւ լուրջ խնդիրներ՝ ես կարծում, որ

«Ո՛չ Թալանին»-ը Քայլ Առ Քայլ Կը Գնայ Իշխանափոխութիւն Պահանջելուն

«Ո՛չ Թալանին» շարժումը մինչեւ օրս էլ պնդում է՝ Բաղրամեանում քաղաքական կոչեր հնչեցնելը ճիշդ է չէր լինի. ներառեալ մեծամասնութեան անդամ Արթուր Քոչարեանը բացատրում է, թէ ինչու ամբիոն չէին տալիս կուսակցութիւններին:

«Իշխանափոխութեան կոնկրետ ժամկէտներում չեն հասել, արդէն որեւորդ կուսակցութիւնը այդ հարցի շուրջ տապալուած է», - նշեց Քոչարեանը

Եւ այնպէս է, որ իրենք չգիտեն երկրի վատ վիճակի մասին, բայց Սերժ Սարգսեանի հրաժարականը դեռ չեն պահանջելու. «Պատասխանատուն հենց Սերժ Սարգսեանն է, եւ երեւի բնակչութեան 99 տոկոսն էլ ուզում է, որ փոխուի ինչպէս ամէն ինչը, որովհետեւ մենք տեսնում ենք, որ տասը տարուց աւելի մի կուսակցութիւն իշխող դիրք է զբաղեցնում, Սերժ Սարգսեանը միշտ իշխանութեան մէջ է, եւ զնալով վիճակը վատանում է: Բայց մեր նախաձեռնութիւնը արդեօք ունի՞ այդ ռեսուրսը դա իրականացնելու: Մենք քայլ առ

«Յժ». Սեպտեմբերին Ընդդիմադիր Լուրջ Կոնսուլիդացիա Է Լինելու

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանը մեր թղթակցի հետ գրոյցում յայտարարել է, որ Հայաստանում «ընդդիմադիր նոր օրակարգ եւ նոր կոնսուլիդացիա է ձեւաւորուում», որը, սակայն, հիմա կուլիսային է եւ խմորման փուլում:

«Եղել են որոշակի շփումներ, ու կայ նախնական ընդհանրութիւն, որ պէտք է կոնսուլիդացիա՝ կեանքի որակը փոխելու համար: Հաւաստացած ձեզ ասում եմ՝ լուրջ կոնսուլիդացիաներ կան եւ դրանք հիմա էլ գնում են», - ասել է Կարապետեանը՝ յաւելելով, որ ինքը նոյնպէս ընդգրկուած է այդ քննարկումներում:

շատ ռիսկային է երկրորդ փուլի անցկացումը եւ կայուն մեծամասնութեան ձեւաւորումը: Ես կարծում եմ, որ լաւ կը լինէր, որ ուղղակի այն կուսակցութիւնները, որ հինգ տոկոսը չաղթահարում են, այդ կուսակցութիւնները հենց ձեւաւորէին պառլամենտը եւ ձեւաւորէին մեծամասնութիւնը: Թէ-եւ դա թող չլինի կայուն մեծամասնութիւն», - «Ազատութեան» հետ գրոյցում ասաց Ղազարեանը՝ պարզաբանելով, թէ որոնք են ռիսկերը. - «Անընդհատ կարող են ճգնաժամեր լինել, որովհետեւ գաղտնիք է, որ քաղաքական դաշտում ընդունուած են մանիպուլյացիաները, մարդ կարող է ոչ թէ գիտակցութեամբ քուէարկել, ոչ թէ սրտով քուէարկել, այլ կարող է կոնյուկտուրայով քուէարկել: Եւ նման բաներ մենք շատ ենք տեսել»:

«Նման թոյլ աւանդոյթներ ունեցող երկրում», - շարունակեց նա, - «փոքր-ինչ ռիսկային է, որ կ'ընկնենք այլ ծայրայեղութեան գիրկը... կ'ունենանք բացարձակ անկառավարելի, անվերահսկելի, հանրային վերահսկողութիւնից դուրս մեծամասնութիւն»:

քայլ ենք գնում դէպի դրան. ի վերջոյ փոխելով Սերժ Սարգսեանին՝ ի՞նչ գիտենք, որ չի գա, օրինակ, Յովիկ Աբրահամեանը»:

«Դուրս Մեր Գրպանից» շարժումն, օրինակ, ճիշդ հակառակ մարտավարութիւնն է ընտրել: Նախաձեռնութեան համակարգող վարդան Յակոբեանի համոզմամբ, առաջին հերթին պէտք է համակարգի դէմ պայքարել, որովհետեւ եթէ անգամ, օրինակ, արագաչափերը հեռացուեն փողոցներից, կը գտնուի թալանի այլ ճանապարհ:

«Ինչ-որ ոստիկանի հրաժարական պահանջելով դու երբեք ոչ մի արդիւնքի չես հասնի: Մեր պատմութիւնը մեզ բաւականին դասեր ցոյց է տուել՝ սկսած Բաֆֆի Յովհաննիսեանի 2013 թուականի շարժումից, երբ փաստօրէն ընտրուած նախագահը էլի գնաց, մտաւ Սահմանադրական դատարան, փոխանակի քաղաքացիական անհնազանդութեան վերածեր՝ մի ամբողջ 30-40 հազարանոց զօրք թիկունքին կանգնած: Դուք պատկերացնո՞ւմ էք՝ լեղափոխութիւնը արդէն կայացած էր», - ասում է Յակոբեանը:

Նժի դեկավարի խօսքով? Ինֆորմացիայի եւ շփումների արդիւնքում իր համար յատկապէս անակնկալ է եղել, որ սահմանադրական փոփոխութիւնների դէմ հանդէս են գալու «ոչ կտրուկ դիրքորոշում յայտնող ընդդիմադիրները»:

Կարապետեանը նաեւ ասել է, որ հեռախօսային շփումներ է ունեցել որոշ ընդդիմադիր գործիչների հետ ու այդ գրոյցներին յետոյ տպաւորութիւն է ստացել, որ կոնսուլիդացիան լինելու է լայն. «Կարծում եմ մինչեւ Սեպտեմբեր այս կոնսուլիդացիաների փուլը կը շարունակուի, իսկ արդէն Սեպտեմբերին ամէն ինչ աւելի ուժաւ կը լինի», - նշել է նա»:

Ընդդիմադիրները Տուսկին Ներկայացրել Են Իրենց Կարծիքը Սահմանադրական Բարեփոխումների Մասին

Հայ Ազգային Գոնկրէսը, Լեւոն Ջուրաբեանի փոխանցմամբ, Եւրոպական Խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկին ներկայացրել է Սերժ Սարգսեանի նախաձեռնած սահմանադրական բարեփոխումների «արատաւորութիւնը»:

«Սերժ Սարգսեանը ցանկանում է ստեղծել մի պարտոկրատիա, որը, ստանալով արդէն սահմանադրութեամբ երաշխաւորուած մեծամասնութիւն, Հայաստանում հաստատելու է մի քաղաքական համակարգ, որը շատ նման է Սովետական Միութեան համակարգին, երբ արտաքնապէս կար ժողովրդավար մի Սահմանադրութիւն, բայց ամէն հարց լուծում էր իշխող կուսակցութիւնը եւ նրա Գեներլը», - «Ազատութեանը» ասաց Ջուրաբեանը:

Տարածաշրջանային այցով Երեւանում գտնուող Դոնալդ Տուսկը, Հայաստանի նախագահի մամուլի գրասենեակին փոխանցմամբ, երկրորդ բանակցութիւնների ընթացքում Սերժ Սարգսեանին «խնդրել է ներկայացնել սահմանադրական բարեփոխումների իրականացման նպատակը եւ այդ գործընթացի վերաբերեալ նրա գնահատականը»:

Թէ հարցին ի՞նչ պատասխան է տուել Սարգսեանը, ներկայացուած է: Սարգսեան-Տուսկ մամուլ-

լի ասուլիսի ժամանակ էլ թեման չչօշափուեց: Լրագրողների հետ կարճատեւ շփման ընթացքում Եւրոպական Խորհրդի եւ Հայաստանի նախագահները միայն երկու հարցի պատասխանեցին՝ ԵՄ-Հայաստան շարաքերութիւններին եւ ԼՂ-ի հիմնախնդրին վերաբերող:

Մինչդեռ Եւրոպացի պաշտօնեայի հետ ընդդիմադիրների գրոյցի հիմնական թեման սահմանադրական բարեփոխումներն են դարձել, «Ազատութեանը» տեղեկացրեց «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը:

Տուսկի հետ հանդիպմանը հրաւիրուած են եղել խորհրդարանի ընդդիմադիր 5 խմբակցութիւնների ներկայացուցիչները: «Ժառանգութեան» փոխնախագահն ասաց՝ իրենց տեսակէտը յստակ է՝ «փոփոխութիւնները միակուսակցական համակարգ ստեղծելուն են միտուած»: Այն փոխանցել են Տուսկին:

«Կարող է՝ Սերժ Սարգսեանի եւ Հանրապետական կուսակցութեան համար շատ չարմար, շատ գեղեցիկ Սահմանադրութիւն կը լինի, իրենց հազով կարուած: Բայց սա միանշանակ Հայաստանի մարտահրաւէրներին չհամապատասխանող Սահմանադրութիւն է», - ասաց Մարտիրոսեանը:

Լեւոն Բարսեղեանի Համոզմամբ՝ Երկրի Գլխաւոր Օրէնքը Փոխելու Հանրային Պատուէր Այսօր Գոյութիւն Զուցի

Գիւմրիի ժուռնալիստների «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեանի համոզմամբ՝ երկրի գլխաւոր օրէնքը փոխելու հանրային պատուէր այսօր գոյութիւն չունի. գոյութիւն ունի Բաղրամեան 26-ի պատուէր: Ուստի ինքը լուրջ չի վերաբերուած նախագծի դրոյթների քննարկումներին. - «Հանրութիւնը ունի բազմաթիւ ուրիշ պատուէրներ՝ սոցիալական խնդիրները մեղմելու, կոռուպցիային վերջ տալու, արտագաղթը նուազեցնելու եւ այլն: Այս ամբողջի հետ կապուած, կարծես թէ, Բաղրամեան 26-ը մատը մատին չի տալիս: Դրա փոխարէն նստած ինչ-որ թղթեր է գրում, քննարկում է, տարիուկէս մեր փողերով ինչ-որ պաշտօնեաների է պահում, յանձնաժողով է պահում, Գագիկ Յարութիւնեանին է ուղարկում ինչ-որ ելոյթներ ունենալու եւ այլն»:

Յիշեցմանը, թէ Սերժ Սարգսեանը յայտարարել է, որ չի

Գեորգ Դանիէլեան. «Այն, Ինչ Առաջարկել Ենք, Քննարկումների Արդիւնքում Է Որոշուել»

Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովը ընտրիչների ինստիտուտի ներդրման տարբերակի վրայ կանգ է առել՝ «գուտ միջազգային պրակտիկան հաշուի առնելով»:

Անցած շաբաթ, երբ հրապարակեց Սահմանադրութիւն նախագծի 1-7-րդ գլուխների նախնական տարբերակը, հանրութեան քննարկման առարկայ դարձան մի շարք հարցեր: Դրանց թւում ամենաշատը թերեւս քննարկուեց ընտրիչ-

ների գաղափարը: Ընտրիչը նա է, ով փաստօրէն փոխարինելու է քաղաքացուն նախագահի ընտրութեան ժամանակ: Ընտրիչների մի մասը, ըստ նախագծի, Ազգային ժողովի պատգամաւորներ են, մի մասը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

«Ընտրիչների տարբերակը ինչու է ընտրուել եւ ինչի չի ընտրուել անմիջական մանդատի տարբերակը: Որովհետեւ այս հարցն էլ երկար քննարկուողներից էր», - ասել է Դանիէլեանը:

ԼՈՒՐԵՐ

Թուրքիայում Հայերի Հետքերը Փնտրող՝ BBC-ի Հայ Եւ Թուրք Լրագրողները Համատեղ Ֆիլմ Եւ Նկարահանել



«Յիշելով Հայկական Ջարդերը» ֆիլմի հեղինակները Լարա Պետրոսեան եւ Ռենջին Արսլան

Երեւանի Մեդիա նախաձեռնությունների կենտրոնում կայացավ BBC-ի լրագրող Լարա Պետրոսեանի նկարահանած «Յիշելով Հայկական Ջարդերը» (Remembering the Armenian Massacres) վաւերագրական ֆիլմի ցուցադրությունը:

Յեղասպանության 100-ամեակին նուիրուած ֆիլմն այս տարուայ Ապրիլի 24-ին հեռարձակուել էր BBC WORLD NEWS, BBC NEWS CHANNEL, BBC PERSIAN TV հեռուստաալիքներով: Այն նաեւ ներբեռնուել է BBC-ի թուրքական ծառայութեան Եւթուբեան էջում:

Ֆիլմում Լարա Պետրոսեանը այցելում է Թուրքիա եւ փորձում Արեւմտեան Հայաստանի նախկին հայաշատ քաղաքներում գտնել 100 տարի առաջ այստեղ ապրած հայերի հետքերը:

Լարա Պետրոսեանին միանում

է «BBC Թուրքիա»-ի լրագրող Ռենջին Արսլանը, որին նոյնպէս յուզում է այն հարցը, թէ իրականում ինչ է կատարուել հարիւր տարի առաջ իր երկրում ապրող հայերի հետ: Ֆիլմում անդրադարձ է կատարուել նաեւ իսլամացած հայերին, ովքեր դեռեւս ֆիզիկական վտանգից խուսափելու համար թաքցնում են, որ իրենց նախնիները հայեր են եղել: Բացի էսկիշէիր քաղաքից, որտեղ կատարուել են ֆիլմի հիմնական նկարահանումները, լրագրողներն աշխատել են նաեւ Վանում, Մուշում, Ստամբուլում եւ Արարատ լեռան ստորոտին: Ֆիլմը նախապատրաստուել է նկարահանուել է Եօթ շաբաթում:

Ֆիլմը անգլերէն է, սակայն հեղինակը պլանավորում է այն թարգմանել նաեւ հայերէն:

«Լրագրողներ Առանց Սահմանների»-նը Կրդովուած Է Հայ Լրագրողի Հետապնդման Առիթով

«Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպութիւնն իր վրդովմունքն է յայտնել «ilur.am» լրատուական կայքի գլխաւոր խմբագիր Քրիստինէ Խանումեանի դէմ շարուցուած գործի կապակցութեամբ:

Խանումեանի դէմ գործ է յարուցուել տեղեկատուութեան աղբիւրը բացայայտեն հրաժարուելու համար:

«Խանումեանի դէմ հետապնդումը վտանգաւոր նախադէպ է Հայաստանում խօսքի ազատութեան համար: Աղբիւրների գաղտնիութիւնը լրագրողի ազատութեան հիմնական պայմանն է», - յայտարարել է կազմակերպութեան ներկայացուցիչ Ջոան Բիրը:

Բացի այդ, նա կոչ է արել Յատուկ քննչական ծառայութեանն անյապաղ հրաժարուել մեղադրանքից:

Հայաստանի Նոր Սահմանադրութիւնը

Շարունակուած էջ 1-էն

մտնել իրենց տրամաբանութեան մէջ եւ փորձել վերլուծել... Ինձ համար դա ընդամէնը արգելուած թէմա է: Թոյլ տալ որեւէ մէկին, հասարակական որեւէ ուժի, որեւէ մարդու, որեւէ կառույցի, որ ես հիմա իրաւունք ունեմ սպաննել մէկ մարդու կամ տասը մարդու կամ քսան

մարդու՝ յանուն ամենափէհ գաղափարների անգամ, ես դա համարում եմ յանցագործութիւն»:

Սահմանադրութեան նախագիծի հեղինակները կը վստահեցնեն, որ փաստաթուղթի ձեւակերպումները վերջնական չեն եւ հանրային քննարկումներու արդիւնքով անոնք կրնան փոփոխութեան ենթարկուիլ:

Հայաստանն Ու Եւրոպական Միութիւն

Շարունակուած էջ 1-էն

րեփոխումներու իրականացման, մարդու իրաւունքներու եւ հիմնարար ազատութիւններու որոտի բարելաւման ուղղուած հարցերուն Հայաստանին աջակցելու իր դիրքորոշման:

Ատուլիսի ընթացքին ըսուեցաւ որ երկկողմ բանակցութիւններու

ժամանակ չէ շրջանցուած նաեւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան թեման: Թուք փոխանցելով Եւրոպայի վերաբերմունքը, յայտարարեց որ, Եւրոպական Միութեան համար առաջնահերթութիւն կը նայ դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորումը:

Եւրոպացի պաշտօնեան նաեւ նշեց որ, Եւրամիութիւնը կը սա-

Քորեացի Պատգամաւոր. «Հայոց Յեղասպանութեան Փաստերը Պէտք Է Տարածել Ողջ Աշխարհով



Քորիացի խորհրդարանականները կը յարգեն Հայոց Յեղասպանութեան գոհերը

Պաշտօնական այցով Հայաստանում գտնուող՝ Հայաստան-Քորիա բարեկամութեան միջխորհրդարանական խմբի պատուիրակութիւնը՝ համանախագահ Նո Յոնգ Մինի գլխաւորութեամբ, Յուլիսի 17-ին Միծեռնակաբերդում շարժանքի տուրք է մատուցել Հայոց Յեղասպանութեան գոհերի յիշատակին: Պատուիրակութեան անդամները նաեւ այցելել են Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, ծանօթացել Հայոց մեծ եղեռնը հաւաստող փաստաթղթերին ու վաւերագրերին, դիտել լուսանկարներն ու ցուցանմուշները, գրառումներ կատարել յուշամատեանում, տեղեկացնում է ՀՀ Աժ տեղեկատուութեան եւ հասարակայ-

նութեան հետ կապերի բաժինը: NEWS.am-ի տեղեկացմամբ՝ քորիացի խորհրդարանականը Աժում կայացած ճեպագրուցի ժամանակ յայտարարել է. «Ես վստահ եմ, որ թէ մենք չյիշենք պատմութիւնը, այն կարող է կրկնուել: Յիշում ենք Հիտլերի այն հարցը, թէ ո՞վ է հիմա յիշում՝ ինչ է եղել հայերի հետ: Այդ պատճառով այդ ողբերգութեան մասին պատմութիւններն ու փաստերը պէտք է տարածել ողջ աշխարհում: Քորիան, ինչպէս եւ Հայաստանը, երկար պատմութիւն ունեն լի տխուր էջերով: Մենք սասցուածք ունենք. նոյն ցաւը զգացողները աւելի լաւ են հասկանում իրար: Նրանք կարող են օգնել իրար»:

Թուրք Դիւանագէտ. «Հայաստանն Ու Թուրքիան Կարող Եւ Բարելաւել Յարաբերութիւնները»

«Աշխարհը փոխուել է, եւ հակամարտութիւնները տեղ չունեն մեր ժամանակներում», - ասել է Ունալ Չելիքոզը:

«Հայաստանն ու Թուրքիան կարող են բարելաւել յարաբերութիւնները յանուն ապագայի», - համոզուած է Թուրք դիւանագէտ, Մեծ Բրիտանիայում Թուրքիայի նախկին դեսպան եւ նախկինում գործող Հայ - Թուրքական հաշտեցման յանձնաժողովի անդամ Ունալ Չելիքոզը:

«Աշխարհը փոխուել է, եւ հակամարտութիւնները տեղ չունեն մեր ժամանակներում: Ես հաւատում եմ մեր սերունդների ապագային, հաւատում եմ մեր յարաբերութիւնների առաջընթացին», - նշել է Թուրք դիւանագէտը:

Չելիքոզի խօսքով, նոր սերունդները՝ թէ՛ Հայաստանում, թէ՛ Թուրքիայում, պատերազմ չեն տեսել եւ պատերազմ չեն ուզում ու արժանի են այլ ապագայի:

«Ես պայիկ եմ դարձել, եւ երբ նայում եմ թունիկիս, գիտակցում եմ, որ այդ փոքրիկ աղջնակն աւելի լաւ ապագայի է արժանի», - ասել է դիւանագէտը:

Նրա խօսքով, նախկինում հայ

- Թուրքական բանակցութիւնները յաջողութեամբ չնշանաւորուեցին, որովհետեւ կողմերը փորձում էին գաղտնի գործել, մինչդեռ այսօրուայ աշխարհում յաջողութեան հասնելու համար անհրաժեշտ է հրապարակայնօրէն գործել:

«Եթէ մեզ յաջողուի համոզել ժողովուրդներին, բացատրել, որ յարաբերութիւնների բարելաւումը բարիք է, այդ դէպքում միայն մենք յաջողութեան կը հասնենք», - ընդգծել է Ունալ Չելիքոզը:

Անդրադառնալով հայ - Թուրքական արձանագրութիւններին՝ դիւանագէտն ասել է, թէ Թուրքիայում նոր խորհրդարան ձեւաւորուելուց յետոյ նարաւորութիւն է տեղծուել արձանագրութիւնները խորհրդարանի օրակարգ մտցնել, ինչը կարող է արուել ոչ միայն խորհրդարանական կուսակցութեան, այլեւ անհատ պատգամաւորի կողմից:

Չելիքոզի խօսքով՝ ապագան կողմերի համար լայն հնարաւորութիւններ է բացում, եւ յանուն ապագայ սերունդների այդ հնարաւորութիւններից անհրաժեշտ է օգտուել՝ հայ - Թուրքական յարաբերութիւնները բարելաւելու նպատակով:

տարէ ԵԱՀԿ Մինսկի Խումբի առաջնորդութեամբ ընթացող դարաբաղեան բանակցութիւնները, շատ կարեւոր է յարգել հրադադարի համաձայնագիրը, զապուածութիւն դրսեւորել գործողութիւններու եւ յայտարարութիւններու մէջ, հակամարտու-

թեան կարգաւորման յառաջընթացին համար միջոցորտ ստեղծել:

Սերժ Սարգսեան իր կարգին շեշտեց, որ Լեւոնային Ղարաբաղի ժողովուրդի՝ ազատ կամքի արտայայտութեամբ իր ապագան որոշելու իրաւունքը վաղուց չի վիճարկուիր:

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆ ՋԵՔԻ ԿԱՆԶԵԼԵԱՆ-ՍՊԻՐ ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԿՈՂՄԵ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԶԱՐՑԸ ԻՄ ՊԱՐՏՔՆ Է ՄՕՐՍ ԱՌՋԵՒ

«Ամերիկայի ձայնի» հայկական խմբագրությունը հարցազրույց է վարել ԱՄՆ Կոնգրեսի հայագրի անդամ Ջեքի Կանզելեան-Սպիրի հետ: Ներկայացնում ենք հարցազրույցի՝ Ցեղասպանությանը վերաբերող հատուածը:

- Կոնգրեսական, կարո՞ղ եմ ձեզ Կանզելեան-Սպիր դիմել:

- Այո՛, խնդրում եմ հենց այդպէս էլ դիմէք:

- Կոնգրեսական Կանզելեան-Սպիր, դուք ԱՄՆ-ի Կոնգրեսի այն եզակի անդամներից եք, ով ունի հայկական ծագում: Այդ փաստը դժո՞ղ է ձեզ վրայ որեւէ յաւելեալ պատասխանատուութիւն:

- Մայրս ազգութեամբ հայ էր, նա կեանքից հեռացաւ 94 տարեկանում, սակայն դեռ վաղ տարիներից նա ինձ պատմում էր Հայոց ցեղասպանության մասին, ամբողջ կեանքիս ընթացքում իմ նախնիներից փոխանցուած այս լիջողությունը հետեւել է ինձ: Յաւով եմ նշում՝ մեր երկիրը դեռ չի ճանաչել 20-րդ դարի այս առաջին ցեղասպանությունը: Այսպիսով, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը կարեւորագոյն մի խնդիր է, որին հետամուտ լինելը իմ պարտքն է մօրս առջեւ:

- ԱՄՆ-ի նախագահական պատուիրակութեան կազմում Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարեդարձի միջոցառումներին դուք Հայաստանում էիք: Տպաւորութիւններն ինչպիսի՞նք էին այդ այցից:

- Իմ յարգարժան գործընկեր, ամերիկահայ մէկ այլ կոնգրեսական Աննա Էլուրի հետ ես նախագահական պատուիրակության կազ-



Կոնգրեսի հայագրի անդամ Ջեքի Կանզելեան-Սպիր

մում Միացեալ Նահանգներն էի ներկայացնում Հայաստանում: Հայոց ցեղասպանության խնդիրը մի հարց է, որին մենք մեծ պատասխանատուութեամբ ենք վերաբերում, եւ ես ինձ խորապէս վերաւորում եմ զգում, որ իմ երկիրը դեռ չի ճանաչել Ցեղասպանությունը: ԱՄՆ-ը պարտաւոր է ճանաչել Հայոց ցեղասպանությունը, թէ՛ ամերիկահայ համայնքի, թէ՛ իր իսկ արժէքներին չզաւաճանելու համար:

- Դուք նաեւ յատուկ նամակ էք պատրաստել եւ լուրջ աշխատանք էք կատարում Թուրքիայի տարածքում հայկական ժառանգութեան, հայկական եկեղեցիների պահպանման համար: Այդ հարցում դեռ վտանգներն առկա՞ն են:

- Թէ՛ Թուրքիայի տարածքում - թէ՛ Մերձաւոր Արեւելքում քրիստոնեաների ժառանգությունը լուրջ վտանգի տակ է, մենք չենք կարող չբարձրաձայնել այս խնդիրը:

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ 5 ՉԵԽԵՐ ԵՒ ԼԻԲԱՆԱՆՑԻ ՎԱՐՈՐԴ ՄԸ ԿՈՐՍՈՒԱԾ

Պէջրութ. AP գործակալութեան համաձայն 5 չեխ քաղաքացիներ եւ իրենց լիբանանցի վարորդը կորսուած են Լիբանանի հարաւային կողմը: Ըստ պաշտօնական աղբիւրներու ինքնաշարժը գտնուած է Քաֆրայայի որոգման կէտին մօտ: Անոր մէջ գտնուած է ճամբորդական պայուսակ մը, անձնաթուղթեր, լիբանանեան եւ եւրոպական թղթադրամներ: Խօսնակ մը այս կապակցութեամբ լրագրողներու յայտնած է թէ յստակ չէ անոնց անյայտացման պատճառը: Տակաւին կարելի չէ գուշակել եղած պատահարի մասին անաբեկչութիւն թէ պատանդ պահուած են որոշ նպատակի մը համար...:

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՎԿԱՆ ԶԱՐՑԸ ՆԱԽԱԳԱՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ Է

The Star թերթին համաձայն Լիբանանի նախկին վարչապետ Սաատ Հարիրիի եւ Լիբանանեան Ոյթերու Կազմակերպութեան ղեկավար Սամիր ժաաթա, իրենց վերջին հանդիպման ժամանակ որոշած են նախապատուութիւն տալ Հանրապետութեան նոր նախագահի ընտրութեան հարցին: Անոնք ազդարարած են ըսելով որ այս հարցի ձգձգումը կրնայ անդամալուծել երկիրը:

Միւս կողմէ վերջերս ժաաթա Սէուտական Արաբիոյ մէջ հանդիպում մը ունեցած է Սալման թագաւորի հետ, դրուատելով անոր դրական կեցուածքը ի խնդիր Լիբանանի կայունութեան:

ԱՐԱՐԱՄԱՔՆԵՐՈՒ ՏԱԳՆԱՊԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Լեռնալիբանանի եւ մայրաքաղաք Պէջրութի աղբահաւքներու հարցը իր լուծումը չի գտնելով գործադուլը կը շարունակուի: Խնդրոյ առարկայ վայրը Նաամէի հողատարածքն է, ուր կուտակուած են աղբերը եւ կ'ապականեն շրջապատի կենսոլորտը: Երկրի շրջապատի նախարարութիւնը որոշած է այս կարեւոր հարցը քննարկութեան նիւթ դարձնել դահլիճի յառաջիկայ նիստին:

ՊԱՅԹԻՆՆԵՐ ԿԱԶԱՅԻ ՄԵՋ

Քանի մը օր առաջ Կազայի մէջ շարունակական պայթիւններ տեղի ունեցան, որոնց պատճառով վեց ինքնաշարժեր փճացան: Պայթիւնը պատահած էր Համաս Կազմակերպութեան ենթակա թաղամասին մէջ, այն

«ԵՂԵՈՆ՝ ԵՂԵՈՆԻՑ ՅԵՏՈՅ» ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍՆ ԱՇՆԱՆԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ ԵՒՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ



Յուլիսի 17-ին ճարտարապետների միութիւնում բացուել է «Եղեռն՝ եղեռնից յետոյ» խորագրով ցուցահանդէսը: Երկլեզու (հայերէն, անգլերէն) 32 պատանուներ ներկայացնում են Արեւմտեան Հայաստանի յուշարձանները, որոնք ոչնչացուել են եւ շարունակում են ոչնչացուել թուրքական իշխանութիւնների կողմից:

«Եղեռն՝ եղեռնից յետոյ» խորագրով ցուցահանդէսը կազմակերպել է «Հոգու պարտք» հայրենագիտական հասարակական կազմակերպութիւնը Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամի աջակցութեամբ: Այն կեանքի է կոչուել ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից յատկացուող դրամաշնորհի եւ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի յայտարարած մրցոյթի շրջանակներում: Ցուցադրութեան նիւթերը տպագրուել են նաեւ երկլեզու գրքոցկում, յայտնում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամը:

«Հոգու պարտք» ՀՀ նախագահ Շոդիկ Յովհաննիսեանը տեղեկացրել է, որ ցուցահանդէսը մինչ Երեւանում բացուելը ներկայացուել է Ստեփանակերտում, Իջևանում, Վանաձորում: ճարտարապետների միութիւնում այն բաց կը լինի մէկ ամիս, այնուհետեւ մշտական ցուցադրութեան կը դրուի Երեւանում:

ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից յատկացուող դրամաշնորհների «Ցեղասպանութիւն» անունական կարգերում իրականացուող ծրագրերի համակարգող Գայեանէ Մանուկեանը նշեց, որ ծրագիրը նպատակ ունի կրթել մատաղ սերնդին եւ տէր կանգնել մեր մշակութային ժառանգութեան այն նմուշներին, որոնք դեռեւս պահպանուած են Արեւմտեան Հայաստանում: Ցուցահանդէսն աշխարհ կը ներկայացուի նաեւ Պրիւսէլում, այնուհետեւ՝ Լիոնում, Ամստերդամում եւ մի շարք այլ եւրոպական քաղաքներ-

ում: Պատանուների էլեկտրոնային տարբերակները տեղադրուած են համացանցում:

Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամի ղեկավար Սամուէլ Կարապետեանը ցուցահանդէսի բացմանը նշել է, որ նախաձեռնութեան նպատակն է ցոյց տալ, թէ 1915 թուականից ի վեր ինչ է տեղի ունեցել մեր պատմական հայրենիքում, մշակութային եղեռն, որ մինչ օրս ընթացքի մէջ է:

Պարոն Կարապետեանի խօսքով՝ որպէսզի մի բան պահպանենք, պէտք է կարողանանք դրա գոյութեան մասին լուր ունենալ: Հայագրի ներկայ սերունդները պարտաւոր են տեղեկ լինել մեր մշակութային ժառանգութեանը: Եւ եթէ դրանց վտանգ է սպառնացել կամ սպառնում, մեր պարտքն է աշխարհին հարաւորինս իրազեկել մշակութային եղեռնի մասին: Այն, ինչ ոչնչացուել է մեր հայրենիքում անցած մէկ դարի ընթացքում, ոչ միայն մեր ցաւն է, այլեւ աշխարհի, քանի որ համաշխարհային մշակութային գանձարանից գանձեր են պակասել:

Ցուցահանդէսին ներկայացուած պատանուներից մէկում պատկերուած է Վանի նահանգում՝ Վանայ լճի Լիմ կղզու վրայ, գտնուող սուրբ Գէորգ վանքը: Վանքի հիմնադրումն աւանդաբար վերագրուած է Գրիգոր Լուսաւորչին, սակայն գրաւոր առաջին վկայութիւնը 884 թուականից է: 1235, 1288 եւ 1301 թթ. վանքում ստեղծուած ձեռագրերում յիշատակութիւններ կան տեղում գոյութիւն ունեցած սուրբ Եհնա, սուրբ Նշան, սուրբ Աստուածածին, սուրբ Կարապետ եւ սուրբ Գէորգ եկեղեցիների մասին: Եկեղեցին հիմնովին վերակառուցուել է 1305 թ.: Վանքը պայթեցուել է 1950-1960-ական թթ.: 2004 թ. դրութեամբ խիստ քայքայուած, սակայն դեռեւս կանգուն էր միայն գաւիթը:

պահուել երբ բնակիչները կը նշէին Ռամատանի տօնը: Այս առթիւ լոյս տեսած միացեալ հաղորդակցութիւն մը կը դատապարտէր արարքը, գայն անուանելով որպէս դաւաճանական արարք, որոնց հեղինակները անպատիժ պիտի չի մնան:

ԹՈՒՆՈՒՉ ԱՐԳԵԼՔԻ ՎԵՐԱՑՈՒՄ ԿԸ ԽՆԴՐԷ ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵՆՆ

Վերջերս Լոնտոն այցելեց Թունուզէն ժամանած դիւանագէտներու պատուիրակութիւն մը: Անոնք բրիտական կառավարութեան պահանջներին որ Թունուզ այցելելու արգելքը վերցնեն թուրքաթիւրքերու վրայէն: Արդարեւ քանի մը շաբաթներ առաջ Թունուզի ծովեզրեայ պանդոկներէն մէկուն ծովափնեայ շրջանի զբօշարչը ինչներու վրայ անծանօթ մը կրակ բանալով 38 հոգիներու մահուան պատճառ դարձած էր: Անոնց 30ը բրիտանահայատակներ էին:

ՍԳԱՏԻՈՒՐ ԱՅԳԱԲԱՑ

(ԿԻՊՐՈՍԻ ԴԵՄ ԹԵՔԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ 41-ՐԴ ՆՇՄԱՆ ԱՌԻԹՈՎ)

ԱԻԵՏԻՍՈՒԱԶՄԻԿ

Յուլիս 20-ի արշալույսին, կիպրոսականներն անգամ մը եւս ընդոստ արթնանալով, վերջիչեցին այն սգատ-խուրդ այգաբացը, որ պատահեցաւ ասկէ 41 տարիներ առաջ: Սովորութեան համաձայն, ռազմական անհազանգները արձագանգելով կղզիի տարածքին, վերաբորբոքեցին այն խոցը, որ անա 41 տարիներէ ի վեր կը մըմուռ կիսուած կղզիին տուժեալ քաղաքացիներուն սիրտերուն խորքը:

1974-ին էր, երբ թրքական զօրքին «Աթիլլա» գործողութեան հետեւանքով, միջազգային ընտանիքին սառն հայեացքներուն դիմաց, Կիպրոսի հիւսիսային տարածքը վճարեց ծանր գինը Անգարայի ծաւալողապաշտ քաղաքականութեան: Կիպրոսական թրքագրիներու անվտանգութիւնը պատրուակելով, Տեմիրէլ-էճեվիտ տիրահազակ զոյգը, կիպրական կնճիռը փորձեցին լուծել թրքավարի տրամաբանութեամբ. ի հարկէ՝ հլու կամակատար ունենալով կիպրական թուրքերու ղեկավար նոյնքան չարահազակ Ռաուֆ Տենքթաշը:

Կիպրոս դասական օրինակ մըն է փոքր երկիրներու այն համանման ճակատագրին, որոնք կը դառնան մեծ տէրութեանց ճատրակախաղին համեստ զինուորը, այս կամ այն յետին նպատակի համար զոհաբերուող: Մեծերու հաշիւներուն մէջ երբ նկատի առնուած են փոքր երկիրներն ու անոնց ժողովուրդները, որոնք դատապարտուած են գաղթի, տնազրկութեան, թշուառութեան եւ կոտորածի:

1571-ին, երբ օսմանցիներն նուաճեցին կղզին, գաջն օգտագործեցին տարբեր նպատակներու: Շահագործելէ բացի անոր ժողովուրդին արդարացի վաստակը, կղզին վերածեցին աքսորավայրի, իսկ Սուլթան Համիտ գործարքի մէջ մտնելով Մեծն Բրիտանիոյ հետ, գաջն պարգեւեց նենգ Ալպիոնին՝ ապահովելով անոր անվերապահ գորակցութիւնը ռուսական հաւանական սպանալիքներուն դէմ: 1878-ին Պերլինի վեհաժողովի վաղորդանիին, ի հեճուկս ռուսական յաղթանակին եւ հայոց յոյսերուն, բրիտանացիք պարտութեան համազօր պայմաններ պարտադրեցին յաղթականին՝ իւրացնելէ ետք Կիպրոսը՝ որպէս աշխարհաքաղաքական եւ ռազմական կարեւորութիւն ունեցող համեղ աւար: Առանց արիւնի եւ պատերազմի, Կիպրոս անգլի-

իականացաւ հեշտընթաց կերպով: Յետադու արձանագրուած դէպքերը ցոյց տուին, որ Մեծն Բրիտանիոյ զաղութատիրական վարչակարգը, առաւելագոյնս խորամանկած է կղզին հակակշռի տակ պահելու համար: Ինչպէս այլուրեք, ատելութեան որոմ ցանելով բնակիչներուն միջեւ՝ եղած է անագնիւ միջնորդ. այսինքն՝ բաժնող՝ տիրելու նկատառումով:

1974-ի արիւնալի իրադարձութիւնը հետեւանքն էր երկու իրարու ներհակ զաղափարախօսութեանց բախումին՝ «էնտ սոս»ի (միացում) եւ «թաքսիմ»ի (բաժանում). առաջինին ջատագովը՝ յունական մեծամասնութիւնն էր Աթենքի ցուցմունքով, երկրորդինը՝ թրքական փոքրամասնութիւնը՝ Անգարայի զրդումով:

Ուրեմն՝ պատահածը այլոց պատերազմն էր՝ խարդաւանքներով եւ սաղրանքներով միահիւսուած: Աւելին, նախկին անգլիական եւ այդ օրերուն Անքըլ Սէմի (ԱՄՆ) մեղսակցութիւնը աւելի քան բացայայտ էր, երբ երկրագունդը կ'ապրէր Պաղ Պատերազմին ամենատապ օրերը: Ինչպիսի՛ մաղձով լեցուած են կիպրացիք ԱՄՆ-ի բոլոր ժամանակներու գերագնացօրէն ամենաաղուէս դիւանագէտ Հենրի Քիսինգըրի նկատմամբ, որ այդ օրերուն մութի մէջ կը ծրագրաւորէր Միջին Արեւելքի, հակախորհրդային պայքարին եւ միջազգային դաւադրութեանց բարդ խաղերը:

1974-ի իրադարձութիւնը կը կոչուի «երկրորդ բաժանում». առաջինը՝ 1964-ին էր, երբ յոյն-թուրք արիւնալի բախումներէ ետք կղզիին վրայ գոյացան բացառապէս թուրք բնակչութեամբ փոքր-փոքր կղզեակներ, ուր մտնել արգիւտած էր, որմէ դուրս ելլելը՝ չէր արտօնուեր: Այսինքն՝ անբնական եւ անհամոզիչ կացութիւն մը՝ յաճախ արիւնալի միջադէպերու կրկնումով:

Կիպրոսի մէջ 1955-էն բռնկած հակազաղութատիրական պայքարը ժողովուրդին կուռքը համարուող Մաքարիոս Գ. Արքեպիսկոպոսին գլխաւորութեամբ յանգեցաւ կղզիին անկախութեան: Կիպրոս որպէս անկախ պետութիւն միացաւ միջազգային մեծ ընտանիքին, սակայն Լոնտոն միշտ ալ իր թաթը պահպանեց կղզիին վրայ՝ որպէս կարանթէօր կողմ Յունաստանի եւ Թուրքիոյ կողքին: Աւելին, ցայսօր Կիպրոսի մէջ անվարձահատոյց կերպով հաստատուած են անգլիական ռազմապահները,



«Աթիլլա» գործողութեան հետեւանք

ցանկացած պահու ռազմական միջամտութիւններ կատարելու համար Միջին Արեւելքի տարածքէն մինչեւ Միջին Ասիա:

Դիպուկ է նշել, թէ 1974-էն տագնապին լուծման ջանքերը կը շարունակուին: Բագում խաղաղարար առաքելութիւններ եկան ու զացին. ՄԱԿ-ի միջնորդներ ու փորձառու դիւանագէտներ անդուլ երթեւեկումներով ջանացին հակամարտութեան լուծման հասնիլ. ծրագրերն ու առաջարկներ մշակուեցան ու քննարկուեցան. բայց հորիզոնին յոյսի նշոյլներ դժուար է ընդնշմարել:

Ընդգծելի է, թէ Կիպրոսի հակամարտութիւնը հիմնական տարբերութիւն մը ունի բաղդատած բազմաթիւ այլ հակամարտութեանց: Յունական կողմը, ըմբռնելով ուժերու յարաբերակցութեան անհամեմատելիութիւնը, նախընտրած է փարիլ խաղաղ բանակցութեան տարբերակին՝ հեռու փքուն հուստրաբանութենէ, տաքլուխ ճառերէ եւ հրահրիչ անիմաստ գրգռութիւններէ: Այդ խոհեմ եւ զգաստ կեցուածքին պատճառով յունական կողմը կը վայելէ խաղաղութեան անփոխարինելի մթնոլորտը:

Ո՛ւր է հակամարտութեան լուծման բանալին: Անտարակոչ, առաջին հերթին՝ Անգարայի մէջ, որովհետեւ՝ Ռաուֆ Տենքթաշ կատարեալ խամաճիկ մըն էր իր վարպետներու ձեռքին: Նոյնը եղան յաջողները: Սակայն այժմ, գրաւեալ հիւսիսային սուտ պետութեան

նոր ղեկավարը Մուսթաֆա Աքընճի, աւելի ձերբագատ Անգարայէն (գոնէ առերեւոյթ), մի գուցէ լուծում գտնէ հանրապետութեան նախագահ Նիքոս Անասիասիանին հետ սկսած բանակցութիւններով:

Բայց, գոնէ որպէս բարիկամեցողութեան առաջին քայլ տեղին պիտի չըլլա՞ր գրաւեալ տարածքներու լեռներու լանջին սարքուած թրքական եւ հիւսիսային Կիպրոսի թրքական կեղծ պետութեան վիթխարի դրօշակատիպ յարմարանքներուն վերացումը, որ ամէն օր ու ժամ կը կիզէ սիրտերը հիւսիսի ուղղութեամբ նայողներուն: Կամ՝ ինչո՞ւ տակաւին թրքական զօրքեր կը յամենան Կիպրոսի վրայ (ըստ պաշտօնական տուեալներու՝ 30 հազար, ըստ ոմանց՝ շատ աւելին):

Տեղին է յիշեցնել, թէ Անգարա որ միշտ կը բարբառէ հարեւան երկիրներու հետ բարի դրացիութենէն, խրատներ կը բաշխէ Հայաստանին՝ «օկուպացուած» Լեռնային Ղարաբաղէն հայ կական զօրքերը ետ քաշելու, մինչ ինք տակաւին գրաւեալ կը պահէ երկիր մը՝ որ կիսուեցաւ անողորմաբար ասկէ 41 տարիներ առաջ:

Յուլիս 20-ի սգատխուր այգաբացը մինչեւ ե՞րբ յաճախանքը պիտի ըլլայ մոռաց յուշերու եւ դաժան ապրումներու: Օր մը պիտի դադրի՞ արդեօք ամէն Յուլիս 20-ի այգաբացին որոտացող զինուորական սարսռազգեցիկ անհազանգը: Հարցումին պատասխանը ունեցողներուն հասցէները գիտենք բոլորս, վստահաբար:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՂԱԴՈՐ ՃԱՆՉՑԱԲ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ. ՊԱՔՈՒՆ ԿԸ ԹԱՔՑՆԵ ԻՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՎ ՅԱՂԹԱՆԱԿ

ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆԵԱՆ

Մարդու իրաւունքներու եւ-րոպական դատարանը 2015-ի Յու-նիս 16-ին «Սարգսեանն ընդդէմ Ատրպէյճանի» եւ «Զիրաքովն ընդ-դէմ Հայաստանի» գործերով միա-ժամանակեայ վճիռ կայացուց՝ ար-ձանագրելով, որ Հայաստանն ու Ատրպէյճանը խախտած են իրա-ւունքները փախստականներուն, որոնք լքած էին իրենց տունները արցախեան հակամարտութեան ժա-մանակ:

Սակայն Ատրպէյճանի պետա-կան պաշտօնեաներն ապակողմնո-րոշած են իրենց քաղաքացիները՝ յայտարարելով, որ Ատրպէյճանը յաղթած է, իսկ Հայաստանը՝ պարտ-ուած:

Անա երկու դատական գործե-րուն մանրամասնութիւնները. 2005ի Ապրիլ 6ին վեց ատրպէյճանցի քիւրտեր համատեղ բողոք ներկա-յացուցած էին Եւրոդատարան ընդ-դէմ Հայաստանի: Անոնք պնդած էին, որ 1992-ին հայ-ատրպէյճա-նական հակամարտութեան ժամա-նակ ստիպուած լքած էին իրենց տունները, երբ հայկական զօրքերը յարձակած էին Լաչինի վրայ, որ Հայաստանը կը բաժանէր Արցա-խէն: Ատրպէյճանցի փախստական-ները պնդած էին, որ Հայաստանը խախտած էր Եւրոպական համա-ձայնագիրով ամրագրուած իրենց իրաւունքները. 1) սեփականութեան պաշտպանութիւն, 2) անձնական եւ ընտանեկան կեանքի նկատմամբ յարգանքի իրաւունք, եւ 3) արդիւ-նաւէտ հատուցման իրաւունք:

Հոտո 2006-ի Օգոստոս 11-ին Մի-նաս Սարգսեանը նմանատիպ բո-ղոք մը ներկայացուց Մարդու իրա-ւունքներու եւրոպական դատա-րան՝ ընդդէմ Պաքով: Ան յայտա-րարեց, որ Ատրպէյճան խախտած է իր իրաւունքները, նոյն իրաւունք-ները, որոնց մասին կը պնդէին վեց ատրպէյճանցի փախստականները, քանի որ ան եւս 1992 թուականին ստիպուած էր փախչելու Շահում-եանի շրջանի Գիւլիստան գիւղէն, որ կը վերահսկուէր Ատրպէյճանի կողմէ:

Երկու կողմերն ալ խնդրած էին վերականգնել իրենց սեփակա-նութեան իրաւունքը եւ պահանջել արդար փոխհատուցում:

2010-ի Մարտին, քանի մը տարուան անգործութենէ ետք, դա-տարանը երկու գործերը յանձնեց քննութեան Մարդու իրաւունքնե-րու եւրոպական դատարանի վերին պալատին, որ կազմուած է 17 դատաւորներէ՝ Հայաստանէն, Ան-տորայէն, Ատրպէյճանէն, Խորուաթ-իայէն, Կիպրոսէն, Իսլանտիայէն, Իտալիայէն, Սպանիայէն, Լաթվի-իայէն, Լիխտենշտայնէն, Լիթվիա-յէն, Լիւքսամպուրկէն, Մոնաքոյէն, Փորթուգալէն, Ռումանիայէն, Սլո-վենիայէն եւ Ուքրանիայէն: Վերին պալատի որոշումները վերջնական են եւ բողոքարկման ենթակա չեն:

Այս գործերը առաջին ան-գամ դատարան ներկայացուելէն մէկ տասնամեակ անց վերին պալա-տը 2015-ի Յունիս 16-ին երկու միանման դատավճիռ կայացուց՝ համարելով, որ Հայաստանը եւ Ատրպէյճանը խախտած էին իրա-րու փախստականներու իրաւունք-ները: 221 էջէ բաղկացած ծաւա-լուն փաստաթուղթին մէջ, ներառ-եալ՝ երկու դատավճիռները եւ

հակասող ու համընկնող տեսակէտ-ները, Դատարանը որոշեց, որ 20-ամեայ խաղաղ բանակցութիւննե-րը չեն ազատէր երկու երկիրներու կառավարութիւններուն հարկը հազարաւոր փախստականներու իրաւունքները պաշտպանելու իրենց պատասխանատուութենէն: Վերին պալատը նշեց, որ Դատարանին մէջ ընթացքի մէջ են աւելի քան հազար անհատական դիմումներ, որոնք ներկայացուած են Արցախեան հա-կամարտութեան ժամանակ տեղա-հանուած հայերու եւ ատրպէյճան-ցիներու կողմէ:

Վեց ատրպէյճանցի հայցուոր-ները կը պնդեն, որ իրենք կրած են 9 միլիոն տոլար վնաս եւ 330 հազար դոլար ոչ դրամական վնաս-ներ: Անոնք իրենց դատական ծախ-սերը գնահատած են մօտ 65 հազար տոլար՝ 2013-ի Հոկտեմբերի դրու-թեամբ: Ատրպէյճանցի հայցուոր-ներուն ներկայացուցիչները կը պա-հանջեն փորձագէտ նշանակել իրենց յաճախորդներուն կրած ընդհա-նուր վնասը գնահատելու համար:

Միւս կողմէ, հայցուոր Մինաս Սարգսեանը փոխհատուցում պա-հանջած է իր ունեցուածքին դի-մաց, ներառեալ՝ իր տուն վերա-դառնալու իրաւունքը: Ան 415 հազար տոլար դրամական վնասի եւ 210 հազար դոլար ոչ դրամական վնասի պահանջ ներկայացուցած է՝ ի լրումն չնշուած դատական ծախ-սերը:

Դատարանը, ընդունելով այս երկու գործերուն «բացառիկ բնոյ-թը», վերջնական որոշում չէ կա-յացուցած փոխհատուցման գումար-ի կամ «արդարացի գոհացման» վերաբերեալ: Վերին պալատը խնդրած է Հայաստանի եւ Ատր-պէյճանի կառավարութիւններէն եւ համապատասխան հայցուորներէն 12 ամսուան ընթացքին «գրաւոր ներկայացնել իրենց դիտողութիւն-ները այս հարցին վերաբերեալ» եւ «ծանուցանել դատարանին՝ ձեռք բերուած որեւէ համաձայնութեան մասին»:

Ըստ ինձի, Եւրոդատարանի գուզահեռ որոշումները նպատակ ունէին ճշուած գործադրելու երկու երկիրներու կառավարութիւննե-րուն վրայ՝ արագացնելու համար խնդրի կարգաւորումը բանակցու-թիւններու միջոցով, որ կրնայ լուծել մնացած բոլոր հարցերը, որոնց շարքին՝ փախստականներու իրաւունքները:

Այս դատական գործերու առա-ւել կարեւոր, բայց անսպասելի արդիւնքներէն էին երկու գրաւոր տեսակէտները, իւրաքանչիւրը՝ բաղկացած 25 էջերէ, որոնք դա-տաւոր Փաուլօ Փինթօ տը Ալպու-կերկէն (Փորթուգալ) կցած էր դա-տարանի վճիռին՝ ներկայացնելով շատ լուրջ իրաւական հիմքեր Արցախի անկախութեան համար. «Որեւէ ժամանակ, երբ երկրի բնակչութեան մէկ մասը ներկա-յացուած չէ իր կառավարութեան կողմէ եւ բնակչութեան իրաւունք-ները շարունակաբար կը խախտ-ուին իր սեփական կառավարու-թեան կողմէ... գոհ դարձած բնակ-չութիւնը «որպէս մէկ վերջին միջոց» կրնայ դիմել ապստամբու-թեան ընդդէմ բռնակալութեան եւ ճնշումներու՝ ըստ Մարդու իրա-ւունքներու համընդհանուր հռչակա-

ԹՈՒՐՔԻԱՆ, ՔՐՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵՆՔ

Ամէն մի ազգ եւ պետութիւն առաջին հերթին, սովորում է իր սեփական փորձից:

Երկու համաշխարհային պա-տերազմ ճաշակած Եւրոպան, թէեւ տատանումներով, այլեւս քայլում է համակեցութեան եւ մերձեցման ուղիով, մինչդեռ Մերձաւոր Արե-ւելքը ազգային եւ դաւանանքային ատելութեան ծայրայեղ բախում-ների ճանապարհով է ձեւաւորում իր նոր պետական սահմանները: 20-րդ դարասկզբի, Փրանս-անգլի-ական Սայքս Փիքօ եւ Բալֆուր գաղտնի համաձայնագրերով Մեր-ձաւոր Արեւելքում արհեստական երկրներ ձեւաւորելու իրողութիւնը, 21-րդ դարասկիզբին ԱՄՆ-ի հո-վանաւորութեամբ, համաձայնու-թեամբ կամ հանդուրժողականու-թեամբ, փոխարինուած է նոր իրա-վիճակով՝ նոր սահմանների, նոր քարտէզի ձեւաւորմամբ:

Մինչ Թուրքիան, գիտակցա-բար կամ անգիտակցաբար, առանց-քային դեր է կատարում տարա-ծաշրջանում քրտական պետութիւն ստեղծելու գործում, ու նաեւ բա-րենպատտ պայմաններ առաջաց-նում Հայկական Հարցի արծարծ-ման համար, Հայաստանի հերթա-կան իշխանութիւնները քաղաքա-ցիներին աղքատութեան մատնելով ու Հայաստանը հայթափելով ամե-նամեծ ծառայութիւնն են մատու-ցում հայկական պետականութեան թշնամիներին:

Քրտերը այլեւս խաղատիկ-նիկներ՝ տարածաշրջանում ընդ-համէնը լծակ ծառայող գործօններ չեն, այլ խաղաղաշտի կենտրոնում գտնուող ազդեցիկ դերակատար-ներ:

Հայրենիք ունենալու կարօ-տախտով ապրող քրտերի երազան-քը, այլեւս, ոչ միայն անհասանելի չէ, այլ դարձել է տեսանելի իրո-ղութիւն:

Արդարեւ, իրաքեան Քուր-տիստանը ներկայանում է ոչ թէ որպէս դաշնային կառավարութեան ենթակայ ինքնավար շրջան, այլ ինքնիշխան պետութիւն: Իսկ նրա անկախութեան հռչակման յետաձ-գումը, ոչ թէ Պաղտատի սպառնա-լիքի, այլ քրտերի հեռատեսու-թեան արդիւնք է:

Սիրիայի իրադարձութիւննե-րի առանցքային շահողը, նոյնպէս, քրտերն են: Մինչ այդ երկրի քրտե-րը աշխարհագրական ամենադժ-ուար պայմաններում են գտնուում, այդուհանդերձ նրանց յաջողուել է նուաճել այնպիսի կարգավիճակ, որ այսօր կազմակերպուածութեան առումով գերակշռում են իրաքեան Քուրտիստանի ինքնավար հանրա-պետութեանը:

Սիրիայի քրտերի դէմ էրդո-ղանի սպառնական հերթական յայ-տարարութիւններն ու թուրք-սիր-իական սահմանում թուրքական բանակի հսկայական տեղաշարժե-րը, իր բոլոր ուսկային գործողու-թիւններով հանդերձ, անգոր են կասեցնել սկսուած ընթացքը, եւ Անքարան, ուշ թէ շուտ, այնպէս ինչպէս մոռացութեան մատնեց իրաքեան Քուրտիստանի անկա-խութիւն հռչակելու «կարմիր գի-ծը», տեսանելի ապագայում հաշտ-ուելու է նաեւ Սիրիայի քրտերի Քանթոնների՝ Սիրիայում քրտա-կան պետութեան գոյութեան հետ եւ, ինքնաբերաբար, նրանց հետ եւս բացելու է երկխօսութեան դու-

րը: էրտողանի Թուրքիան, կամայ թէ ապամայ, ինքն է գօրացրել քրտերին.

- Մատարելով Արբիլի քրտա-կան ինքնավար հանրապետութեան, իրաքի կենտրոնական իշխանու-թեան դէմ,

Օրուան պատգամը փոխանցեցին Ղպտի եկեղեցուց հոգեւոր պետ Ն.Ս. Թառաւորոս Բ. Պատրիարքը եւ վերոյիշեալ արարողութիւններուն ու ձեռնարկներուն Ն.Ս. Ֆրանսիս Պապի ներկայացուցիչ Կարտինալ Քրիթ Քոլըր ընթերցեց այս առիթով Պապին յղած յատուկ պատգամը: Յանուն բոլոր եկեղեցական հիւրերուն անոնք ողջունեցին ու շնորհաւորեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, շնորհակալութիւն յայտնելով իրենց տրուած հրաւերին եւ այս մասնա-

ւոր պատիւին: Անոնք իրենց հոգեւոր ցնծութիւնը արտայայտեցին Հայ եկեղեցուց հռչակած Հայոց Ցեղասպանութեան նահատակներուն սրբադասման համար:

Պատարագի աւարտին, նոր օրհնուած Սրբալոյս Միւռնոնով կատարուեցաւ Չորհնէքի արարողութիւն: Եւ ապա, ներկայ բոլոր հոգեւոր պետերու եւ եկեղեցական ներկայացուցիչներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ միջ-եկեղեցական աղօթք, նուիրուած Հայոց Ցեղասպանութեան նահատակ սուրբերուն:

Եկեղեցական արարողութեանց աւարտին, բոլոր եկեղեցականները թափօրով ուղղուեցան Անթիլիասի Սրբոց Նահատակաց մատուռը, ուր ծաղիկներ գետեղեցին նահատակ սուրբերուն մասունքներուն առջեւ: Ներկայ ժողովուրդը ինդրելով նահատակ սուրբերուն բարեխօսութիւնը անգամ մը եւս վերանորոգեց Աստուծոյ եւ Հայ եկեղեցուց իր հաւատարմութեան ուխտը: Ժողովուրդը նաեւ բաժին ունեցաւ օրհնուած Չուրէն, որ իրենց տունները տանելով՝ ընտանիքի բոլոր անդամները հաղորդակից դարձուցին Սուրբ Միւռնոնի օրհնութեան:

Համասեանի համերգները ձախողել, եւ հայկական եկեղեցիների կամարների ներքոյ գոնէ մի քանի ժամով իշխողը հայոց ոգու շնչառութիւնն էր:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Email: -----

ՅՈՒՍԷՓ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ «ԿԵԱՆՔԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ՇԱԽՂՆԵՐ» ԳԻՐՔԸ

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Գիրքը հրատարակուել է Լոս Անճելէսում, 252 էջ է, պարունակում է 52 յօդուած, գրուած է ժամանակագրական կարգով. ընդգրկում է 1983-2002 թուականներին գրուած յօդուածների ընտրանին: Տարեթուերը ներկայացնում են գրքի մասերը:

Հայրենիքը դարերից ի վեր եղել է հայի եւ սփիւռքահայի ամենասիրելի, ամենանուիրական Սրբութիւնը: Հայը Հայաստանը չի պատկերացնում առանց Արարատի, Հայաստանն ու Արարատը անբաժանելի մասնիկներ են նրա համար, Հայաստան անունը լսելիս նա անպայման այն պատկերացնում է Արարատի հետ միասին:

Հայաստան այցելող բոլոր սփիւռքահայերի նման Յովսէփը ոտք դնելով հայրենի հողի վրայ վարակուած է «Հայրենասիրութիւն» անբուժելի հիւանդութեամբ, որը աւելի է խորանում իր մէջ, երբ այցելում է հայկական հին ու նոր պատմութիւններով «խօսող» յուշարձանները, որոնք գալիք սերունդներին պատգամ են թողնում. «Պահպանել դրանք աչքի լոյսի պէս» որպէս հայի գոյատեւման երաշխիք:

Հեղինակը ինքնուրոյն ձեռագիր ունի: Նա իր յօդուածներում, սկսած առաջինից («1983-առաջին այցելութիւն Հայրենիք», էջ 9) հիմնական նիւթը լրացնում է փաստագրական տեղեկութիւններով, որով գիրքը դառնում է նաեւ տեղեկատուական աղբիւր:

Յովսէփը բծախնդիր է հայերէնի հարցում. այն օգտագործելիս՝ բանաւոր, թէ՛ գրաւոր, պէտք է գերծ պահել նրան օտար բառերից: Օտար հայագէտները հիացել են մեր լեզուի հարստութեամբ ու մաքրութեամբ, իսկ մենք աղաւաղում ենք այն «նորամուծութիւններ» կատարելով օտար բառերից: Նա դեռ ուսանողական տարիներին որոշել է զբաղուել այս հարցով և իր հրատարակած գրքերում պահպանում է այդ պայմանը:

Յովսէփ Նալբանդեանը գրքում անդրադարձ է կատարել հայ անուանի մարդկանց, նրանց ներկայացնելով ընթերցողին իրենց անգնահատելի գործունէութիւններով՝ Անդրանիկ Օգանեան, Յակոբ Պարոնեան, Պարոյր Սեւակ, եւ ի հաստատումն իր գնահատականները մէջբերել է նրանց, և գրքում օջափուած տարբեր երեւոյթների մասին հանրաճանաչ մարդկանց կարծիքները:

Հեղինակը, որպէս գրականագէտ եւ մատենագէտ, լաւ է ուսումնասիրել հայերէն լեզուի կարեւորութիւնն ու նպաստը հայ ժողովրդի նորածինների ձեւաւորման միջոցով Հայրենիքի գոյատեւման եւ սփիւռքի հայապահպանման գործընթացում («1990-Լեզու եւ Խօսք», էջ 49): Սակայն նշենք, որ երբ հայ հաւաքականութիւն է հաստատուում որեւէ երկրում, սկզբնական շրջանում մայրենին չաղթական երթ է կատարում շնորհիւ կազմակերպութիւնների ու անհատների աշխոյժ գործունէութեան, բացում են խմբագրատներ, մշակութային օջախներ, սակայն որոշ ժամանակ անց այդ աշխուժութիւնը թուլանում է տուեալ երկրի ազդեցութեան տակ, որին չի դիմանում նոյնիսկ ամենահզօր գաղութը, մասնաւոր, եթէ տուեալ երկիրը քրիս-

տոնէական դաւանանք ունի, ինչպիսին էր Լեհաստանի հոծ հայ գաղութը, որը ձուլուելով լեհերի հետ նպաստեց նրանց աճին...: Նոյն երեւոյթը կրկնուած է Լոս Անճելէսում, որտեղ ապրում է աւելի քան 300 հազար հայ: Քանի որ նոր սերունդը յաճախում է ամերիկեան դպրոց, մեծ մասը հայերէն գրել-կարդալ չգիտի, այստեղ եւս սկսեցին փակուել խմբագրատներ կամ կրճատուել լոյս տեսնող մամուլի տպաքանակը (տիրաժը), էլ չենք խօսում հայերէն տպագրող գրքերի «որը մնալու մասին, քանի որ հայերէն կարդացող չկայ...»:

Հեղինակի հայրենասիրութիւնը սահման չունի: Նրա համար սուրբ է այն, ինչ կապուած է անմիջականօրէն Հայրենիքի հետ, եւ նա չի թաքցնում իր պրպտումների արդիւնքում պարզ արտայայտուել այդ մասին:

Պրն. Նալբանդեանի մտահոգութիւնը հայկական դպրոցն է, յատկապէս սփիւռքում, որպէսզի հայապահպանումը գոյատեւի, մինչեւ հրաշքով տունդարձ կատարուի դէպի Հայրենիք-Հայաստան: Նա անհանգստացած է սփիւռքի հայ գաղթօճախների տեղաշարժերով-վերաձեւումներով՝ կախուած տարբեր երկրներում տեղի ունեցող պատերազմներով և այլ հանգամանքներով, որոնց արդիւնքում փակուած են բազմաթիւ դպրոցներ, իսկ նոր առաջացող գաղթօճախներում դպրոցներ բանալու անհնարինութեամբ, որի համար դարձեալ առաջ է քաշուած ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ հարցը (որը, դժբախտաբար, երկար տարիներ ձեռնուղ թեմա է...), հնարաւոր դարձնելով հիմնադրամ տեղծել այդ նպատակով: Այս առիթով նշեմ, որ հաստատուած երկրում հայը աւելի շատ եկեղեցիներ է կառուցում, քան կրթական հաստատութիւններ, չմտածելով, որ վերջիններս են հիմնաքարը հայի պահպանման ու գոյատեւման...: Փաստ, մեր ժամանակներում որոշ եկեղեցիներում արդէն արարողութիւնը կատարուած է անգլերէնով...:

Հեղինակը անարդարութեան դէմ անողք է: Նա չի հանդուրժում որեւէ անձի կողմից վարկաբեկումը, կամ գրպարտումը մարդկանց ու կազմակերպութիւններին: Ինչպէ՞ս կարելի է այգանել, գրպարտել, լեռնաբերաններ մոզոնել մարդուն, երբ նրա մասին ստոյգ ոչինչ չգիտէք և նրան չէք ճանաչում («1993-Ծանիր Զքեզ Եւսէբիոս», էջ 93):

Նա ճիշտ է նկատում, որ թոյլտուութեամբ (վիզայով) Հայաստանից սփիւռքի տարբեր երկրներ այցելող հայերը մի քիչ զարմանալով արտերկրների լիութեան վրայ, որը պակասում էր Խորհրդային Միութիւնում, և բնական է, որ «չտեսի նման վերաբերուէին իրենց շրջապատող երեւոյթների նկատմամբ» բաց ոչ որպէս «վաճառական», այլ իրենց ընտանիքների ապրուստը հոգալու համար:

Հեղինակի ջանքերը, հայերի թուրքական ազգանունները հայերէնի վերածելու, դժուարութիւնների է հանդիպում («1993-Մեր Հայկական Մականունները», էջ 113): Այս հարցը յաճախ է քննարկման նիւթ դարձել մամուլում, բայց դեռ լուծում չի գտել: Հիմնական

«ՓՈՔՐԻԿ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ» ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ 15ՐԴ ՏԱՐԵՇՐՁԱՆԸ



2000 թուականին, Բլիկեան ընտանիքի ազնիւ մտայնացմամբ հիմնադրուեց «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցը, որ 2010ին Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանի օրհնութեամբ տեղափոխուեց առաջնորդարան՝ վերակազմաւորուելով Ս. Ղեւոնդեանց Մայր տաճարի հովանու ներքոյ: Անցնող տարիներին, վարժարանը, շնորհիւ իր ազգային ոգու պահպանութեանն ուղղուած ջանքերի ու որակեալ, հայեցի դաստիարակութեան՝ դարձաւ Լոս Անճելէսի ամենահեղինակաւոր կրթօճախներից մէկը: Այստեղ ջերմութեան, սիրոյ, անկեղծութեան ու ազնիւ մթնոլորտում մեր մատող սերունդը շարունակում է հաղորդակցուել հայոց բազմադարեայ մշակույթին, բիւրեղեայ մայրենի լեզուին ու հասարամեայ պատմութեանը: Ուսումնական կենտրոնն իր կառուցուածքով, որդեգրած մօտեցումներով, դասաւանդման արդիական, ազգային ու հոգեմտաւոր սկզբունքներով՝ դարձել է նմանատիպ հաստատութիւնների չափօրինակ եւ առաջատար ոչ միայն Միացեալ Նահանգներում, այլեւ ողջ Սփիւռքի տարածքում:

Ամենեւին էլ պատահական չէ, որ դպրոցի իրականացրած հսկայածաւալ ծառայութիւնը, ուշադրութեան եւ բարձր գնահատականի է արժանացել նաեւ հայրենի կառավարութեան կողմից: 2015 թ. Ապրիլի 9ին, ՀՀ սփիւռքի նախարարութեան, Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միութեան կողմից կազմակերպուած «Մայրենիի Պաշտպան» մրցոյթում, ուր 15 երկրներից մասնակցում էր շուրջ 95 հաստատութիւն, «Փոքրիկ Հրեշտակներ»ն արժանացաւ գլխաւոր մրցանակի, Ա. կարգի դիպլոմի եւ դրամական պարգևի:

Նմանօրինակ պատիւ ոչ միայն կատարուող աշխատանքի արդար արժեւորումն է, այլեւ՝ կրթօճախի պաշտօնէութեան ու մանկավարժների անսակարկ նուիրումի արդիւնքը: Դպրոցի տնօրէն, Յովհաննէս սարկաւազ Գուժուրյանի խօսքերով, «Հայրենի իշխանութեան կողմից այսպիսի գնահատութիւնը լաւագոյն նուէրն էր հաստատութեան յոբելեանական տարեդարձին: Այն միաժամանակ պարտաւորեցնող էր, խրախուսող ու ոգեշնչող»:

Շնորհիւ եկեղեցուց տարածուող աւատ օրհնութեան եւ առաջնորդարանի մշտական խնամքին, «Փոքրիկ Հրեշտակներ» շաբա-

թօրեայ դպրոցը իւրօրինակ լուսաւորութեան կենտրոն է, որտեղ աշխատող ուսուցիչներն ունեն բազմամեայ դասաւանդման փորձ: Նրանք ուսումնական ողջ տարուան ընթացքում իրենց գիտելիքները՝ շաղխուած հայրենասիրութեամբ, հոգեւոր ու անանց արժէքներով, փոխանցում են մեր մատող սերնդին: Հարկ է նշել, որ մանկավարժները մշտական համագործակցութեան մէջ են դուրսը իլի Անդրէասեանի կողմից համակարգուող թեմի գիտակրթական յանձնախմբի հետ եւ իրենց մշտական մասնակցութիւնն են բերում ուսուցիչների ամէնամեայ վերապատրաստման դասընթացներին:

Դպրոցն առաջնորդուած է Հայաստանի Հանրապետութեան հանրակրթական դպրոցների դասազրբերով: Իր կապի աշակերտների եւ ծնողների հետ պահում է գանազան միջոցներով: Ունի անգամ յատուկ Ֆէյսբուքեան էջ (Little Angels Saturday School), ուր տեղադրուած են դպրոցին առնչուող յատուկ նիւթեր, նկարներ եւ յայտարարութիւններ:

Հաստատութիւնում սովորող շուրջ 200 աշակերտները ջերմ մտերմութեամբ են կապուած արեւմտեան թեմի հոգեւոր դասի, յատկապէս՝ Ս. Ղեւոնդեանց Մայր տաճարի հովիւ Խաժակ քնյ. Շահբազեանի հետ: Տէր հայրը խնամքով, ամէն շաբաթ, բարոյական ու կրօնական պատգամն ու օրհնութիւնն է փոխանցում սաներին: Վերջիններս, հոգեւոր գանձերով հարստացած՝ շարունակում են իրենց ուսումնական աւօրեան: Նրանք ակտիւօրէն մասնակցում են նաեւ թեմական, հոգեւոր ու ազգային ձեռնարկներին, արարողութիւններին ու տօներին: Ամէնամեայ տարեվերջի քննութիւններին ու կազմակերպուող հանդէսներին ի յայտ է գալիս մանուկների ձեռք բերած գիտելիքները:

2014-15 ուսումնական տարուան փակման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ Յունիսի 13ին, առաջնորդարանի «Գալաճեան» սրահում: Իր օրհնութեան խօսքում, առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանը շնորհաւորեց ներկայից դպրոցի յոբելեանական տարեդարձի առթիւ: Սրբազան հայրն իր մասնաւոր գնահատութեանն արժանացրեց դպրոցի պաշտօնէութիւնը ու յատկապէս ծնողներին, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում իրենց զաւակներին հայ պահելու դժուար ու պատասխանատու

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Կարաւանը գնում էր ինքնաշարժի լայն ճամբայով: Գիշեր էր, ճանապարհային երթեւեկով թիւնը խիստ նուազ: Արտեմիս դիցուհին, անուշ դէմքով լուսնեակը ափին մէջ, կարաւանի երթին համընթաց ճախրում էր երկնակամարում, կաթնալոյս փռում նրա ճանապարհին: Կարաւանի տղաքը հանգիստ քայլում էին, ինքնաշէն ցուպերը դէպի լուսնեակ պարզած, ողջոյնում էին Արտեմիս դիցուհուն: Կանչում էին՝ «Արտեմիս, երկիր իջիր, մինչեւ լուսաբաց քայլիր մեզ հետ, խոտանում ենք տանել քեզ Արմինա երկրի աստուածների Աշտիշատ բնակավայր, ընկերանալ արեւ աստուած Միհրի հետ, հարսանիքի պատարագ լինէր»: Գիշերներին, արմինների աստուածների հետ պտոյտ կը գար նրանց արարչական երկրի երկնակամար, ցերեկներին կը հանգէր Արարատ լեռան ձիւնտո գագաթի նրանց բնակավայրում:

Հարիւր ու աւելի մանչերի կարաւանի առաջնորդը՝ դաստիարակ-տեսուչ, Մելգոնեան Կրթական Հաստատութեան մարմնամարզութեան ուսուցիչ՝ պարոն Յակոբ Աճեմեանն էր: Եթէ հարիւրաւոր մեթրեր հեռու ճանապարհին քայլելիս թէկուզ նրա ստուերը տեսնէին, պիտի բացականչէին՝ «արդեօք այդ ո՞վ է, նոր մարմնամարզիչ է ժամանել քաղաք»: Պարոն Աճեմեանը մանչերի կարաւանն առաջնորդում էր՝ Կիպրոս կղզիի հիւսիսային կողմի մայրի ծառերի անտառների մէջ սուզուած՝ Հալէֆկա Փոստ-հեռագրատան կայանին մօտիկ... Մակարավանք: Արեւելքի ժողովուրդների գրապահոցների կաէ սալիկներին ու նրանց երկիրների քարերի երեսներին դրոշմուած գրութիւնների պատմներով վկայուել է, որ Եղեմը մարդկային քաղաքակրթութեան օրրան՝ Արմինա երկիրն էր, արմիններն էլ նրա մարդիկ: Եւ այդ կարաւանի մանչերը, յետնորդներն էին՝ գայլի պատկերով դրօշակ պարզած աւագակաբարոյ մարդկանց կողմից հայրենագրուած արմիններ:

Պարոն Աճեմեան, անցել են աւելի քան եօթանասուն տարիներ, նրա ժպտերես ստուերը երեւակայութեանս պաստառին է: Հաստատութեան մարզադաշտի հարթակին ելած, իր դիմաց կուռ շարքերով կանգնած ուստերին ու դուստրերին բարձրակող հրամայում է իր ուսուցանած մարզանքի առանձին հնարքները կատարել: Կիպրոսի տարբեր քաղաքներից Արմին-հայերի հոծ բազմութիւն էր եկել դիտելու հաստատութեան սաների մարզանքի տարեկան հանդէսը: Պարոն Աճեմեանը, սպիտակ համագրեւտով, բարձր յենարանի վրայ ելած, խմբավարի նման, կարծես նուագախմբի համանուագ էր վարում: Ինքն էլ նրանց հետ՝ մարզանքի գեղեցիկ ու համաչափ հնարքները կատարում, ձեռքերը վեր պարզած ուղորդում սաների շարժումները: Զմայլած, սաների համաչափ ու գեղեցիկ մարզանքի հնարքների շարժումների կատարումից, ամբոխի նման խելագարուած հանդիսականը որոտընդոստ ծափահարում էր:

Պարոն Յակոբ Աճեմեանը «Մարմնամարզութիւն» էր ուսանել Սկանտինաւեան Դանիա երկրում, արհեստավարժ մարզիկ ու

դաստիարակ էր: Արտաքին ամրակազմ կերպար ունէր, հոգին էր պայծառ, սիրտը ամուր ու բարի քնքշանքով լեցուն: Մտերմիկ յարաբերութիւններ էր հաստատել սաների հետ: Դպրոցում սիրուած ու անչափ յարգուած ուսուցիչներուց էր: Բոլորին յայտնի էր նրա հայրենասիրութիւնը եւ նրա ընկերավարական գաղափարախօսութեան յախուռն հաւատամքը:

«Տղա՛ք, բարձրաձայն երգէք, խօսէք, աղմկէք» կանչում էր կարաւանն առաջնորդող Պարոն Աճեմեանը: Առանց շարքեր կազմած, ազատ երթի քայլքով էինք անցնում ճանապարհը: Գիշեր էր, ամառային երազային պարզկայ գիշեր, աստղերի վառ աչուկները լուսնեակի հետ լոյս հոսում կարաւանի ճանապարհին: Հաստատութեան սահմանից դուրս էինք, ազատ քայլում, չկար հաստատութեան ճնշիչ ծանրութիւնը, փշալարերով շղթայուած տարածքը, դասերի օրական մի քանի պահերի պարտադիր անշուկ սերտողութիւնը: Կարգապահութիւնը խիստ էր Մելգոնեան եղբայրների հիմնադրած կրթական հաստատութիւնում:

Կարաւանի տղաքը երգում էին Տօքթոր Մելքոն Գրիշէանի դպրոցական երգչախումբի հայերէն ու ռուսերէն երգերը, երաժշտութեան դասատու Պարոն Վահան Պետելեանի ուսուցանած երգերը: Զանապարհային երգչախումբ, ամէն մէկը երգում էր իր ձայնով, երգի աղաւաղուած բառերով, անխմբավար երգչախումբ էր: Կարաւանը, իր երթի ընթացքին անցնում էր յոյն բնակչութեամբ գիւղի ծայրամասի ճամբայով: Կարաւանի աղմուկից գիւղն էր զարթնել: Իմանալով, որ Նիկոսիայի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մանչերն էին, դուրս էին եկել ճանապարհի եզր, ծափահարում, բարձրաձայն կանչում կանգ առնել: Յունարէն խօսել իմացող մի մանչի հետ գրոցից իմացել էին, որ այդ տղաների խումբը գնում էր Հալէֆկա-Մակարավանք ամառային հանգստի, խնդրել էին իրենց ճանապարհի երթին մի պահ հանգստանալ, կուժերում ամբարուած սառնորակ ջուր էին հրամցրել, ափերով նորահաս միւրգ նուիրել: Գովաբանել էին իրենց եւ հայերի նոյն ցեղին պատկանելու փառքը, նրանց դարաւոր բարեկամութիւնը: Կարաւանը միաձայն շնորհակալութիւն է յայտնում գիւղի բնակիչներին, ուրախ շարունակում իր երթը:

Հասել էին լեռան լանջի ստորոտին: Պարոն Աճեմեանը, Ալեֆկա տանող գառիվեր ճանապարհը յաղթահարելու համար հրամայել էր կարճ դադար առնել, մի պահ հանգստանալ: Երթի շարքերն էին փլուզուել, գրուցում, կատակում էին: Պարոն Աճեմեանն էր մօտեցել իւրաքանչիւրին, հետաքրքրուել նրանց առողջական վիճակով: Ահա, ամրակազմ ու մարմնամարզիկի շքեղ կեցուածքով Պարոն Աճեմեան է իջել համակարգիչիս կապոյտ երեսին, նայում, ժպտում: Որպէս նրա հանդէպ տածած երախտիքի խօսք, մի քանի տողեր եւս գրեմ իր մասին: Ոչ միայն գեղեցիկութիւնը եւ նրա զգացողութիւնն են փրկում աշխարհը, այլ նաեւ առողջ մարմնի ու հոգու մէջ առողջ գեղեցիկութեան ամրութիւնն է փրկում այն: Պարոն Աճեմեանը, դպրոցի ոչ միայն մարմնամարզութեան, այլ նաեւ մարզական խաղերի դաստիարակ-



ուսուցիչն էր: Գիտէր ամէն մի ուսանողի հոգեկան խառնուածքը, ֆիզիքական ամրութիւնը, սիրով էր լցուած ամէնքի հանդէպ: Միայն այդիկ զաւակներ ունէր, արդեօք տղայ զաւակի կարօտն էր, որ այդքան սիրով էր սաների հանդէպ: Նիկոսիա ոստանի մարզադաշտ, հաստատութեան սաների մարմնամարզութեան տարեկան պաշտօնական դաշտահանդէսն էր: Ոստանի Հայ ու Յոյն հոծ բնակչութիւն էր եկել դիտելու Հայ արի պատանիների ֆիզիքական վառ առողջութեան հանդէսը: Պարոն Աճեմեան, բեմական աթոռակին ելած, իր պիւրկ ձեռքերի շարժումներով, հատու ձայնով ուղորդում էր մարզադաշտի սաների շարքերի գեղեցիկ ու համաչափ մարզական հնարքները, կարծես այն մարմնամարզութեան համանուագ լինէր: Հայա, նրա մարզած ոտնազնդակի խումբի մրցամարտը՝ համակրարական դպրոցական առաջնութեան յաղթող խմբի հետ: Ամէն Հայու համար պատիւ պիտի լինէր դիտելու այդ խանդավառ, կրակոտ մրցամարտը, մահուան կարաւաններով անցած արմինների մանչերի յաղթանակ տանելու տենչը, աշխարհին ասելու, որ Արմին-Հայը ամուր է հոգով, ամուր է կամքով: «Գոլեր» զարկին յոյների դարպասին, յաղթանակի ատրուշաններ վառեցին խաղը դիտող հայերի սրտերին: Չէ, Արմին-Հայը ՄԵԾ է իր Տիգրան արքայի, Արշակ Թագաւորի, Մեսրոպի, Խորենացիի, Կոմիտասի, Անդրանիկի նման, արի մարդկանց պատմութիւն ունի, արարչական է իր ծնունդով, իր բնօրրանում արարած քաղաքակրթութիւնն է աշխարհներ հասել: Իմ լեռնականի սիրտը Արարատին, Արմինա երկիրն:

Կարաւանը, դանդաղ ընթացքով բարձրանում էր Ալեֆկա տանող լեռան ճանապարհի լանջն ի վեր: Երկնակամարի աստղերի աչուկների լոյսն էր նուաղում, երեւի յոգնած գիշերային մութից քուն էին մտնելու: Ինչքան լանջն ի վեր բարձրանում էին, այնքան աւելի նուազ լոյս էր մաղում կարաւանի ճանապարհին: Մութն էր անխնամ, արեւ աստուած Միհրն էր զարթնել Արարատ լեռան ձիւնոտ գագաթին: Արմիններ հաւատացել էին, որ արեւ աստուած Միհրը իրենց սրբազան լեռան գագաթին կանգնած լոյս է ճամբում աշխարհին: Հանդիպակաց ծովի ալիքների պարի խրախճանքից ջուրն էր փշուռում, մշուռում, գնում փարուում ծաղիկներ թեր-

թիկներին, ծառերի սաղարթներին, ծաղիկներն էին զարթնում...: Ալեֆկայի կայանում էին, հերթապահները զարթնել էին կարաւանի տղաների կանչերից, դուրս էին ելել իրենց կացարաններից, ակներն էին լոյսով շփում: Ամէն տարի, նրանք դիմաւորում էին ամառային արձակուրդներին Մակարավանք հանգստանալու եկող Մելգոնեան Կրթական Հաստատութեան սաներին: «Հայոց Արարատ լեռան վրայ ծագած արեւ աստուած Միհրի լոյսն ենք բերել ձեզ» կանչում էին Յունարէն խօսել իմացող մանչերը: Պարոն Աճեմեանը յորդորել էր, ճանապարհի երթը շարունակելուց առաջ, մի պահ հանգստանալ մայրի ծառերի բացատին: Մարերի գագաթներից արեւն էր իրենց ժպտում, լոյսով ողորում իրենց երեսները: Լոյսն էր ջրերի կաթիլների հետ հոսում ծառերի թեւերից, կարծես ջրալոյսի արեւ անձրեւ լինէր:

Տղաների կարաւանը երգով քայլում էր մայրի անտառով: Հասել էին մի բլուրին... նրա յատակի ձորում Մակարավանքն էր. «Զարթնէք», կանչում էին կարաւանի տղաները: Վանքի տաճարը բոլորած վանական միաբանութեան ու ուխտաւորների երկու յարկանի կացարանների համալիրի տանիքների կարմիր-կարմիր կղմինտրների վրայ ընկած առաւօտեան արեգակը՝ ի պատիւ կարաւանի ժամանման խորոյկ էր վառել: Վանքի հարաւային դարպասի դիմացի հարթ տարածութիւնում լարուած վրանների տղաքը, կացարաններում հանգստացող աղջիկները դուրս էին ելել բացատ, կանչում էին՝ Պօղոս, Մարգիս, Պետրոս, Յարութիւն, Նիկողոս, Փանոս, Վարդգէս, Մարտիրոս, Պարգեւ, Կարպիս, Վարուժան եւ ինչքան կարաւանի մանչերի անուններ կային, հասնէլ էք, եկէ՛ք, եկէ՛ք համարձակ-կտրիճ տղաներ, ձեռնափայտերը մի՛ նետէք, վանքի տաճարում պահ ենք տալու: Տղաները, շտապ քայլքով ժամանում վանք, գրկախառնուում ընկերների հետ, սիրով ծաղկած ակներով փնտրում «սիրելիներին», սիրոյ կրակով վառուած ժպիտ ցանելու նրանց վարդացած դէմքերին, գնում իրենց դասարանների վրաններ, իրենց երկար երթի խոնջանքը թօթափելու:

Մակարավանք: Այն հիմնադրուել էր Եգիպտոսի Ղպտի համայնքի կողմից, մօտաւորապէս մ.թ. 1000 թուականին, հայերին ժառանգուել էր մ. թ. 1425 թուական:

ՄԱԿԱՐԱՎԱՆՔ

Շարունակում է 16-էն

նին: Վանքը հայերին էր նուիրաբերել Աղեքսանդրիայի Սուրբ Սակարիա Հերմիտ պատրիարքը: Վանքը ու նրա ամբողջ հողային տարածքը, թուրքիայի կողմից գաղթուած կղզու բռնագրաւած հատուածում է: Այն, ծովից 530 մետր բարձրութեան Պենտադակտիլոս լեռան արեւելեան մասում, Հայեֆկա բնակավայրից մի քանի կիլոմետր հեռու, Պլատանյոտիսսա անտառի մի բլրակի ներքեւի եզրին է: Վանքին պատկանած 8500 արտավար-լծվար (էջք) տարածութեան հողամասը հասնում է մինչեւ Միջերկրականի ծովեզրեր: Այնտեղ աճում են 30,000 ձիթապտուղի ու կարոբի (խառնուպ) հասուն ծառեր: Վանքի տարածքը յատկանշուած է որպէս նկարագեղ ու հովուերգական վայր: Կիլիկիայի Տաւրոս լեռնաշղթան Կիպրոս կղզու ճիշտ դիմացն է: Իրիկիայի թափանցիկ հայեւանման լոյսի փայլից երեւում է Տաւրոս անտառոտ լեռների համայնապատկերը, որին կը ջանամ աւելի մանրամասն անդրադառնալ: Սուրբ Մակար անուան վանքը յոյների ու հայերի համար դարերով հանդիսացել է ժողովրդեան ուխտագնացութեան եւ կաթողիկոսների, պատրիարքների եւ Կիլիկիոյ այլ հոգեւորականների համար հանգստավայր, ինչպէս նաեւ Սուրբ Երկիր մեկնող ուխտաւորների եւ տեղական ու օտար ճանապարհորդների հրապուրիչ կեդրոն:

Մակարավանքը նաեւ ամառանոց էր, որտեղ իրենց ամառաւիտ արձակուրդներն էին վայելում Հայ Արիներ (Պոյակառուտ) եւ դպրոցների պատանիները: Ինչքան անուշ էր ՄԿԶ ուսանողների ամառային արձակուրդները անցկացնել Մակարավանքում, կամ էլ նրա բլուրի գագաթին բացուած վրաններում: Վանքի գրապահոցներում պահպանուած էին 1202-1740 թուականների անգիրն ու ընտիր ձեռագիր մատեաններ, ինչպէս նաեւ բազմաթիւ եկեղեցական մատուցներ, բարեբախտաբար որոնցից շատերը 1947 թուականին վերապահպանուել էին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանում:

«Թուրքը անցաւ ալտեղից»: 1974 թուականին, մեծ տէրութիւնների լուռ համաձայնութեամբ, Կիպրոս կղզի արշաւեց թրքական բազմահազարանոց բանակը: Կիպրոսը բաւարար ռազմական կարողականութիւն չունէր կասեցնելու թուրքի բանակի ներխուժման ընթացքը: Թշնամին նուաճել էր կղզու հիւսիսային ամբողջ տարածքը, երկրի մայրաքաղաքի մի մասը, որտեղ գտնուած էր նաեւ հայերի առաջնորդարանիստ եկեղեցին ու նրա կից դպրոցի շէնքը: Թուրքիան իր կամքով, թէ մեծերի միջամտութեամբ ընդհատեց յարձակումը, գրաւել էին կղզու մէկ երրորդ մասը: Թուրքը, իրեն բնորոշ գործելակերպով կողոպտեց գրաւած տարածքը, անասելի տառապանք պատճառեց նրա բնակիչներին, գերավարուած մարդիկ չվերադարձան իրենց տներ...: Չաւթել էին նաեւ Մակարավանքը, փլել էին Մարիամ Աստուածածին տաճարի գմբէթը, աւերել էին խորանը ու պատերի սրբապատկերները, կողոպտել էին ձեռագիրները, եկեղեցական մատուցները եւ վանականների ու զբօսաշրջիկների կացարանների ինչքերը: Կիպրոսի թրքական մասի կառավարութիւնը որո-

շել էր վաճառել Մակարավանքը թուրք գործարարի, որը այն քանդելու ու տեղում «Հոթել» էր կառուցելու: Կիպրոսի Հայ համայնքի ազդու միջամտութեան շնորհիւ, ՄԱԿ-ի պատկան յանձնաժողովը արգելակել էր այն:

Չկայ վանքի Զէյթունցի Ակուն Աղայի պահպան ընտանիքը: Զէյթունի ապստամբութիւններին իր կրակած «Մարթին» գէնքն էր մահաճակալի տակ: Չկան ուխտաւորներ, չկան «Հայ Արիներ»-ը, չկան Մելգոնեանի սաները, որ շունչ փչէին նրա որմերին, որ նրանք ամուր կանգնէին: Հայաստան աշխարհի հազարաւոր վանքերի ու եկեղեցիների նման փլատակուել է Մակարավանքը: Կիպրոսի Հայ համայնքի մարդիկ, երբեմն ուխտագնացութեան են գնում վանք:

Կեանքը Մակարավանքում: Ամառներին, հատառութեան տղաների ու աղջիկների քրքիջով էր զեղուն Մակարի վանքը: Աղջիկները, բաց պատուհանները առաջ կանգնած երգում էին, բակի տղան էին ակները սեւեռում պատուհաններին, մի հայեացք փոխանակելու իրենց «ընկերոջ» հետ: Թոյլատրուած էր աղջիկ ու տղայի ազատ շփումը: Ծնողի գուրգուրանքից ու խնամքից հեռու տղաներ ու աղջիկներ, աշխարհում պատերազմ, դժուար, սակայն ոչ տխուր պատանեկութիւն էր: Բոլորն էլ փոքր տարիքի էին հաստատութիւն ուսումնառութեան եկել: Դեռ անհարժրդ էին կեանքի յարատեւ խոնջանքին, կեանքի պայքարի մաքառումներին, մարդկային հասարակութեան բարբերին, դեռ չգիտէին ինչպէս էին «աշխարհի տարտը շարկելու»: Նրանք բոլորը, իրենց հայրենագրկուած ցեղի «դանթէականից» փրկուածներին ու նրանց գաւակների գարմի շառաւիղներից էին: Հաստատութիւնում իրենց ցեղի եղեռնի գոհերի յիշատակն էին պատարագում, առանց հաղորդեղած լինելու նրա պատուհաններին: Մանչ ատեն ունկնդրած էին իրենց պապերի ու տատերի պատուհանները, սակայն դեռեւս հասու չէին ըմբռնելու նրա ահաւորութիւնը: Մուսա Լեռան մեր հայրենի տան պատի պատարաւին, զինուոր դարձած մարդկանց լուսանկարներ էին, նրանցից ոմանց անձամբ ճանաչում էի, նրա կեդրոնում հրացանը գետնին յենած լեգէոնական Կապորալ Արմենակ հայրս էր, սակայն չգիտէին նրանց զինուոր դառնալու տէր պատանքը: Նրանք, իրենց լեռներում դուշմանի դէմ յաղթական ճակատամարտեր մղած քաջերն էին: Լեռան բարձունքներ կռուի ելած Մուսա Լեռան 4200 յաղթական շինականներ, Եգիպտոս, Փորթ-սալիտ էին հասել: Նրանցից գէնք կրելու ընդունակ վեց հարիւր անվեհեր շինականներ «Հայկական Լեգէոն» էին հիմնադրել, նրանց միացել էին դուշմանից վրէժ լուծելու հազար-հազարներ արեւորդիներ: Գնացին հեռու Պաղեստինի Արարա Լեռան կռուին, մէկ օրուայ ընթացքում քանդեցին թուրքի դուշմանի ու գերման սպաների ռազմական ամրութիւնները, որի հրամանատարն էր Քեմալ Աթաթուրքը: Ռազմաճակատի Անգլիացի հրամանատարը յայտարարել էր աշխարհին՝ «Երկու հարիւր հազար անգլիացիներ քանդեցին թուրքի դուշմանի ու գերման սպաների ռազմական ամրութիւնները, որի հրամանատարն էր Քեմալ Աթաթուրքը: Ռազմաճակատի Անգլիացի հրամանատարը յայտարարել էր աշխարհին՝ «Երկու հարիւր հազար անգլիացիներ քանդեցին թուրքի դուշմանի ու գերման սպաների ռազմական ամրութիւնները, որի հրամանատարն էր Քեմալ Աթաթուրքը»:

Պարոն Յակոբ Աճեմեանն էր Մակարավանքում այդ տարուայ

ամառային արձակուրդի հսկիչը: Վանքում իր հանգիստը անցկացնում էր նաեւ Երուսաղէմի Միաբանութեան վարդապետ Հայր Պարոյրը, որը Մելգոնեանում «Հայ Եկեղեցու Պատմութիւն եւ Կրօն» էր դասաւանդում: Երիտասարդ, բարձրահասակ, կայտառ վարդապետ էր: Վանքի տաճարում, իրիկնամուտի ժամերգութեան ու Կիրակի օրերի պատարագի արարողութիւններ էր կատարում, որին պարտադիր էր աշակերտութեան մասնակցութիւնը: Դպրոցի երգչախումբն էր ժամերգութեան երգեցողութիւնը կատարում: Պատարագի վերջաւորութեանը, վարդապետը խաչով Սկիհը վեր բարձրացրած կանչում էր՝ «Աստուած, պահպանի Հայաստանի Հանրապետութիւնը»: Ինչ ասեմ վարդապետ, քու ժամանակից քան-քանահինգ տարիներ առաջ ոչ ոք պահպան եղաւ քու ցեղակիցներին ու նրանց երկրին, վարդապետ, քաջերի գէնքն ի ձեռն կռուել միայն պահպան կը լինէր ու կը լինի երկրիդ: Վանքի ձորակն էր պատարագի շարականների հնչիւններն էր արձագանգում, լսել էք ձորի արձագանգի խորունկ ձայնը, այն պատուած է մարդու հոգին, գնում հասնում նրա հեռու անդաստաններ:

Պարոյր վարդապետը Զէյրան անունով գեղեցիկ նժոյգ ունէր: Որպէս շինականի մանչ, ինձ էր վստահել նրա խնամքը: Հեծնում էի մերկ նժոյգը, տանում ձորակի աղբիւր ջուր խմեցնելու: Ելնում ինքնաշարժի հողածածկ ճանապարհ, պատուհաններին ելած աղջիկները կանչում էին, «Պողոս թուրք»: Ուժգին ձգում էի սանձը, «Զէյրանս, թուրք Պէգասի նման, արեւ տար ինձ, որ լոյս բերեմ վանքին» ասում էի, «Ինչու թուչեմ արեւ» խրինջում էր Զէյրանը, «ծովի ջրեր կը ձողբեմ, քեզ կը տանեմ քու երկիր, նրա կարօտով ու լոյսով լեցնելու հոգիդ»: Վանքն էր կանչում՝ «Պողոս ետ արի, վարդապետը տեսնում է»:

Յերեկներին, հանգստի ժամ կար: Լուռ էր վանքը: Ուսանողները գիրք էին ընթերցում, ննջում, տարեվերջի քննութիւններին ձախողած ուսանողները վերաքաղ անում: Տարբեր օրերին, աւելի բարձր դասարանների տղաքը, գրականութեան, Հայոց պատմութեան, իմաստասիրութեան ակադեմիական վէճեր էին անցկացնում, յաղթող պարտուողի հարց չկար, իրենց գիտելիքներն էին ուսուցանում, գեղուն մտքերով պիտի վերադառնային հայրենական տներ «Հարուստ միտք ունի Մելգոնեանցին»: Պարոն Աճեմեանը, վանքի տաճարի բացատում, աշակերտների մասնակցութեամբ, «Գիտութիւնը անէճք, թէ օրհնութիւն» թեմայով ակադեմիական վիճաբանութեան նիւթ էր առաջադրել: «Քիմիկոս Գիտնականի» համբաւ ունէի դպրոցում, երկրի ու ընտանեկան պայմանները արգելք եղան մագլցելու նրա բարձունքներ: Ինձ եւ իմ համակրած դասընկերուհի Անժելա Դաւիթեանին՝ առաջարկուել էր պաշտպանելու թեմայի «Օրհնութիւն» կողմը: Թոյլատրուած էր, նրա հետ, վանքի դարպասին մօտիկ տաղավարում պատրաստելու վիճաբանութեան պաշտպանական ճառը: Անժելան եղաւ ոչ միայն դպրոցական ընկերուհիս, այլ նաեւ կեանքի ընկերս: Մեր հասուն տարիքին ընդհատուեց այն, եղաւ այնպէս, որ յետագայ ճամբասանցնէի մենակ, յոգնում եմ մենակութիւնից... հոգիս մութ է, լացում է նրա ստուերի առաջ:

Վիճաբանութեան օր, Պարոն Աճեմեանը նրա վարողն ու իրաւարարն էր: «Օրհնութիւն» կողմի պաշտպանական ճառ՝ գիտութիւնը մարդկային հասարակութեան համար բարեք էր, այլապէս. նա դեռեւս երկար դարեր կը մնար նախնադարեան համայնական հասարակարգի պայմաններում, չէր վայելի բարեկեցիկ ու հաճելի կեանք: «Անէճք» կողմի պաշտպանական ճառ՝ գիտութիւնը պատերազմ վարելու մահուան գէնքեր է շինել, մարդկութիւնը մահ ու աւեր է պատճառում: Պարոն Աճեմեանը հակադարձել, գիտութիւնը աշխարհում ընկերվարական հասարակարգ է ստեղծել, մարդկութիւնը չարիքի հանդէպ յաղթանակ կը տօնախմբի: Աշակերտները՝ «Օրհնութեան» ի նպաստ էին քուէարկել:

Վանքի բացատ, խոշոր վրաններ: Գրիգոր ու Կարապետ Մելգոնեան եղբայրներն էին Եգիպտոսի Փորթ-Սալիտ քաղաքի Լազարէտոս գաղթականացանից դպրոց բերել: ՀԲԸՄ-ի տրամադրած այդ վրաններում՝ հանգրուանել էին Մուսա Լեռան բարձունքներում ազատութեան մարտեր մղած 4200 շինականներ, որոնք իրենց ցեղի ու կանանց պատուի համար կռուի էին երկ դուշմանի դէմ, սպանել նրա յոխորտանքը: Ասպետական Ֆրանսսան չթողեց կռուել շարունակել, բերին Սուէզի ջրանցքի աւազուտների վրանաւան: Մուսալեռցի տղաքը յոխորտում էին իրենց ծնողների տարած յաղթանակով, կանչում՝ «Այս վրաններից վառօդի հոտ է գալիս»:

Հետաքրքիր էր վանքում տղաների ու աղջիկների լոգանքը: Այնտեղից հեռու տարածքներ գնացող նեղլիկ ճանապարհի աջ կողմի ժայռի տակից նուազ ջուր էր բխում: Նրան մօտիկ, քարերով պատած կրակարանի վրայ մետաղեայ խոշոր տակաւ էր: Աղբիւրակից ջուր էին լցնում, կրակ վառում, որ ջուրը տաքանար: Բացօթեայ բաղնիք, առանձին խումբերով ուրախ-գուլարթ լոգանք էին ընդունում, ոչ մի տեղ նման բաղնիք չի, կեցցէ փլած Մակարավանք...:

Տեսել էք, արեւի իրիկնային բիւրեղեայ թափանցիկ լոյսի շողերի փայլը հորիզոնի ցամաքի ու ջրերի երեսներին: Հէքիաթ է այն: Պարոն Աճեմեանի հետ բարձրացել էինք վանքի մօտակայ բարձր բլուր ... «Կիլիկիայի լեռները» բարձրակոչ կանչում էինք: Մայր բնութեան հրաշածին, գեղանուշ պարգեւն էր այն, կարծես ծառերը մեղմիկ օրօրում էին, ձեռքերը երկարէիր թիփերից ծաղիկ կը քաղէիր, ձիհունի գետաբերանից ափերով ջուր կ'ըմպէիր, ծովի ջրերի սպակեայ երեսի վրայով Կիլիկիա կը գնայիր: Լոյսի շողերն էին մթնում "աւաղ" կանչելով վերադառնում վանք: Մուսալեռցի տղաները պատմում էին, որ զինուոր դարձած իրենց շէնքերի քաջ մարդիկ գրաւել էին Կիլիկիան: Պողոս Նուպար Փաշայի գլխաւորած Հայկական պատուիրակութիւնը մեծ տէրութիւնների հետ համաձայնագիր էին կնքած եղել՝ Ֆրանսիայի խնամակալութեամբ վերականգնել Կիլիկիայի Հայկական պետութիւնը: Սիս մայրաքաղաքում, մէկ օրեայ կառավարութիւն, չթողեցին, օտարը նորէն խաբեց Արմին-Հայ ցեղին...:

Ես վերջ չունեմ Մակարավանքի ու Մելգոնեան Կրթական Հաստատութեան պատմումներին: Նրա մէկին թուրքը վերջ տուեց, իսկ միւսին՝ իրենք հայերը: Չիմացան, որ դպրոց գոցելը նման է «վանք» փլելուն... առայժմ այսքան:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՄՂՁԱԲԱՆՁՆԵՐ. ԻՆՉՊԵՍ ՕԳՆԵԼ ՓՈՔՐԻԿԻՆ՝ ՅԱՂԹԱՅԱՐԵԼՈՒ ՎԱԽԸ

2. Ֆրոյտը քունը կը համարէր մարդը անգիտակցական ոլորտ տանող իրական արքայական ճանապարհ:

Սակայն, երբեմն, մեր երազը կը լեցուի վախցնող պատկերներով եւ անհանգիստ իրադարձութիւններով՝ յառաջացնելով գիշերային մղձաւանջներ: Եւ յաճախ մարդը անոնց դէմ անգօր է: Գիշերային մղձաւանջներէն յաճախ կը տառապին փոքրիկները՝ 5-20 %: Պատճառները երկուքն են՝ ամբողջապէս չհամարացած հոգեկանն ու դեռ ամբողջապէս չձեւաւորուած «հոգեբանական իրականութիւնը»՝ յստակ գիտակցութիւնը, թէ ի՞նչը իրականութեան մէջ կայ, ինչը՝ ոչ:

Մանկական մղձաւանջներու դէմ պայքարելու հոգեբան Ռուլամպերդի տարբերակները

Բազմամեայ փորձն ու գիտական հետազոտութիւնները թոյլ տուին մանկական հոգեբաններուն մշակելու վատ երազներու դէմ պայքարի միջոցներ: Միեւնոյն կաշուն նիւթով կրկնուող մղձաւանջը՝ սովորաբար կը խօսի փոքրիկի կենսաբան մէջ որեւէ հոգեբանական կամ ֆիզիքական խնդիրի մասին, որուն սկզբնաղբիւրը գտնելը պէտք է ըլլայ ծնողներու եւ մասնագէտներու հիմնական խնդիրը:

1. Հեռակառավարման վահանակ: Կարելի է առաջարկել փոքրիկին երազը պատկերացնել իբրեւ գլխուն մէջ ցուցադրուող պատկերասփիւռային հաղորդում: Այս պարագային երազը կը վերածուի ձանձրալի սարսափ ֆիլմի: Կարելու է հասնիլ անոր, որ երեխան ինքը սկսի այդ հաղորդման համար սենարիօ մտածել, ուր պիտի ըլլան իրեն հաճելի իրադարձութիւններ եւ ամէն անգամ երբ գիշերային մղձաւանջ ըլլայ եթերով, փոքրիկը պիտի «փոխէ» ալիքը:

2. Նկար: Երազը կարելի է

նկարել թուղթի վրայ: Այս պարագային փոքրիկը պիտի կրնայ հեռանալ գինք վախցնող իրադարձութիւններէն, տեսնել անոր բոլոր փոքր մանրամասները:

Նկարը նաեւ կ'օգնէ երազը քննարկելու մտերիմ մէկուն հետ՝ վստահելի ու բարի մեծահասակի, եւ անոր հետ միասին մտածել, ինչպէս փրկութեան ճանապարհ, օգնութիւն կամ հրէշներուն յաղթելու եղանակ գտնել երազին մէջ:

3. Երազ: Երբեմն փոքրիկները ընդունակ են արթուն երազելու, վերապրելու երազի իրադարձութիւնները՝ ընկղմելով վիճակի մը մէջ, միեւնոյն ժամանակ պահպանելով երկխօսութեան մէջ մտնելու կարողութիւնը: Այսպիսի վիճակը ճանապարհ կը հարթէ մղձաւանջը կառավարելու համար: Օրինակ մեծերը կրնան օգնել ստեղծելու հերոսի կերպար մը, որ միշտ օգնութեան պիտի հասնի:

4. Քուն: Երազի քննարկման ժամանակ հոգեբանը կը խնդրէ փոքրիկէն երազը պատմել տարբեր հերոսներու տեսանկիւնէն, օրինակ հրէշի, որ կը մոռնայ ու կը փորձէր ուտել զինք: Հարկաւոր չէ սահմանափակուիլ միայն կենդանի մասնակիցներով, երբեմն անշունչ առարկաները եւ այլն:

Ասիկա կ'օգնէ փոքրիկին ձերբազատուելու գոհի դերէն եւ երազի իրադարձութիւններուն նայելու այլ անկիւնէ, անոր մէջ նոր իմաստ գտնել եւ ինքնավստահութիւն ձեռք բերել:

Եւ վերջապէս, կարելու է ինչ տարբերակ կ'ընտրէք, մղձաւանջներէն տառապող փոքրիկին համար ամենակարելուը ուշադիր ու չուսալի մեծահասակի առկայութիւնն է, որ ունակ է անոր տազնապնները անցնելու:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ԻՆՉՊԵՍ ԿԵՐԵԻ VITAMIN C-Ի ԱՆԲԱԲԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՄՆԻՆ ՍԷՉ

Vitamin C-ն կարելու է նշանակութիւն ունի նիւթափոխանակութեան, մանաւանդ սպիտակուցներու իւրացման, շարակցական հիւսուածքի բնականոն վիճակի պահպանման, հիւսուածքներու վերականգնման համար: Vitamin C-ի անբաւարարութեան պարագային կը բարձրանայ արիւնատար անօթներու թափանցելիութիւնը, կը խախտի ածառային ու սակրային հիւսուածքներու կառուցուածքը եւ կը յառաջանայ լնտախտ: Vitamin C-ն կարելի է գտնել բանջարեղէններու, միրգերու, հատապտուղներու, յատկապէս գետնախնձորի, կանաչ սոխի, լոլիկի, պղպեղի մէջ, ինչպէս նաեւ սեւ հաղարջի, մորիի, թրթնջուկի, կիտրոնի, նարինջի եւ այլն:

Մանրամթերքի մէջ Vitamin C-ի պարունակութեան վրայ կ'ազդեն անոնց պահպանման եղանակը, տեղադրութիւնը եւ խոհարարական մշակումը: Vitamin C-ն արագ կը քայքայուի մաքրուած բանջարեղէնին մէջ: Խնձորը պահելէ 3 ամիս անց կը կորսնցնէ Vitamin C-ի 16 %-ը, 6 ամիս ետք՝ 25 %-ը: Գետնախնձորը մաքրուելով կը կորսնցնէ Vitamin C-ի 16-22 %-ը:

Բանջարեղէնը տաք ջուրով եփելով պահպանած կ'ըլլանք Vitamin C-ն՝ գրեթէ լրիւ, պաղ ջուրի

մէջ 25-35 %-ը կը կորսուի: Առանձնապէս շատ կը քայքայուի (մօտ 30 %) բանջարեղէնի ապուրները տաքցնելու ժամանակ: Լաւ կը պահպանուի թթու միջավայրի մէջ, մետաղներու ազդեցութենէն կը քայքայուի:

Պղինձի, կապարի, գինքի եւ այլ մետաղներու նոյնիսկ փոքր քանակը (որ կ'անցնի կաթնալոծ), կը քայքայէ ասպորտիլինթթուները: Ուստի աւելի յարմար է կերակուրը եփել յաղորդիչում, արծնապատ կամ չժանգոտող մետաղէ կաթսաներու մէջ:

Ի՞նչ կը պատահի Vitamin C-ի անբաւարարութեան պարագային

Սկզբնական շրջանին ընդհանուր թուլութիւն, թորչումածութիւն, արագ յոգնածութիւն, քնտուութիւն, գլխապտոյտ: Նշուած երեւոյթները աւելի յաճախ ի յայտ կու գան գարնան ընթացքին: Այնուհետեւ կը նկատուի շրթունքներու, ականջներու, քիթի, եղունգներու կապտութիւն, լինտերը կ'ուռին եւ կ'արիւնահոսին, բերանէն կը զգացուի տհաճ հոտ, կը շարժին եւ մինչեւ անգամ կրնան ինչպէս ակուանները: Կտրուկ կերպով կը նուազի մարմնի դիմադրողականութիւնը վարակիչ հիւանդութիւններու հանդէպ:

5 ՊՏՈՒՂՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԵՐԻՏԱՍԱՐԴԱՅՆԵՆ

Որոշ միրգեր օգտակար են ոչ միայն կազմուածքի ու առողջութեան համար, այլ նաեւ արտաքին տեսքի: Անոնք կ'օգնեն հարթեցնել կնճիռները, մազերուն փայլ կը հաղորդեն, աւելի ամուր կը դարձնեն եղունգները:

Քանի մը միրգ, որոնք, ըստ անդազէտներու, կրնան երիտասարդացնել ձեզ:

Չմերուկ: Չմերուկը կը պարունակէ մեծ քանակով լիգոբեն՝ հակաօքսիտանդ, որ կ'օգնէ պաշտպանուելու անդամանիշակագոյն ճառագայթներուն դէմ: Յատկանշական է, որ ձմերուկներուն մէջ այս նիւթը 40 տոկոսով աւելի է, քան լոլիկներուն, որոնք յայտնի են իրենց հակաօքսիտանդ յատկութիւններով:

ԱՄՐԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՈՒՏԵԼՈՒ ՀԻՆԳ ԿԱՆՈՆ

Մեր աննդակարգը, իբրեւ կանոն, կապուած է եղանակի հետ եւ ջերմաստիճանի հետ: Ամրան մենք կ'ուտենք այլ ձևով, քան տարուան ցուրտ եղանակին:

Իսկ ինչպէ՞ս պէտք է ուտել ամրան

Ըստ գիտնականներու՝ որեւէ պարագայի պէտք չէ ուտելիք գնել պատահական վայրերէ: Տաք եղանակին բոլոր ախտածին մանրէները կը բազմանան շատ արագ, եւ եթէ պահպանման կամ պատրաստման կանոնները խախտուած են, թունաւոր ուլիքը եւ աղիքային որեւէ վարակով հիւանդանալը աւելի հաւանական կը դառնայ: Պէտք է ձեռք բերել անդամթերքներ միայն

Նուր: Նուրը կը պարունակէ մեծ քանակով հակաօքսիտանդներ՝ մասնաւորապէս, Vitamin C, որ կ'օգնէ ազատելու կնճիռներէն եւ մորթին վնասող մանրէներէն: Անոնք կ'օգնեն նաեւ ազատելու անդամանիշակագոյն ճառագայթման իբրեւ արդիւնք ի յայտ եկած ճառագայթումէն:

Հաղարջ: Հաղարջը նոյնպէս կը պարունակէ մեծ քանակով C ու E կենսանիւթեր՝ հակաօքսիտանդներ, որոնք մորթը կը դարձնեն աւելի վառ ու առողջ:

Աւոքաւո: Աւոքաւոն կը պարունակէ Օմէկա-9 ճարպթթու, որ կ'օգնէ մորթը խոնաւ ու փափուկ պահպանելու:

Դդում: Դդումը կը պարունակէ պեթաքարօթին, որ կը նպաստէ մորթի նոր բջիջներու աճին:

վստահելի վայրերէ, ուր կը հետեւին պահպանման ու մաքրութեան կանոններուն:

Ամրան ընթացքին խորհուրդ կը տրուի նաեւ կրճատել իւրոտ անուղի օգտագործումը: Մարմինը կարիք ունի շատ մեծ ուժերու, որպէսզի կարենայ վերամշակել ճարպը, եւ տաք եղանակին իւրոտ անուղի աւելուող ճնշում կը պատճառէ մարմնին: Պէտք է ճաշել զով վայրերու մէջ կամ օրուան զով ժամերուն՝ նոյնպէս մարմինը չճնշելու համար:

Ամրան ընթացքին կարելու է նաեւ շատ հեղուկ խմել՝ մօտ 3 լիթր, որպէսզի մարմինը կարենայ կատարել իր բոլոր պաշտօնները:

ԵԻՇԴ ԼՈՒԱՅՈՒԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Մասնագէտները խորհուրդ կու տան առաւօտեան եւ երեկոցեան լուացուելու ժամանակ հետեւիլ որոշ կանոններու:

Պէտք է նկատի ունենալ տարիքը եւ մորթին տեսակը: Պէտք է յիշել, որ չոր օճառով լուացուելը վնասակար է: Անիկա հեղուկ օճառի համեմատութեամբ ունի թեփփփոցող յատկութիւն, կը չորցնէ մորթը եւ կ'արագացնէ վերջինիս ծերացումը: Ատոր հետ մէկտեղ կրնայ յարմար միջավայր ստեղծել սուկներու եւ վարակներու տարածման համար, որ կրնայ յառաջացնել մորթային լուրջ խնդիրներ:

Մասնագէտները կը նշեն, որ օճառով մորթու աւելուող ճարպի դէմ պայքարը արդիւնաւէտ չէ: Մորթը՝ գրկուելով պաշտպանիչ շերտէն՝ աւելի արագ կ'արտադրէ մորթային ճարպ: Հետեւաբար, իւրաքանչիւր տեսակի մորթ պէտք է

ճիշդ մաքրուի: Չոր օճառի փոխարէն պէտք է լուացուիլ հեղուկ օճառով: Մորթը մաքրող կաթը պէտք է օգտագործել օճառի փոխարէն, այլ ոչ թէ՛ ջուրի:

Քլորով ջուրը պէտք եղածին պէս չի լուար մորթը: Այդպիսի ջուրը միայն կը չորցնէ մորթը եւ կը զրգռէ գայն: Նման պարագաներու լաւագոյն տարբերակը խոտերով թրմուած ջուրով լուացուիլն է:

Չոր եւ զգայուն մորթի պարագային խորհուրդ կը տրուի օգտագործել կտաւատի սերմերէն պատրաստուած թուրմ, իսկ իւրոտ մորթի պարագային՝ յարմար է խնձորածաղիկի թուրմը: Աչքերու դիմադրողարուած պէտք է կատարուի յատուկ միջոցներով, ծայրայեղ պարագային օգտագործելով բուսական իւղ: Լուացուելէ ետք մի մոռնաք օգտագործել պաշտպանիչ քսուք:

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐԵՐ

Օգոստոս 8, 2015
«Փոքր Նայթ» կազմակերպութեամբ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութեան

Սեպտեմբեր 12, 2015
«Արաբական Գիշեր» ըթրիք, կազմակերպութեամբ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութեան:

Սեպտեմբեր 20, 2015
Հայաստանի Անկախութեան 24րդ տարեդարձի փառատօն- դաշտահանդէս, Կլէյտէյլի վերտուկօ գբօսայգի, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան:

Save the Date

NOV. 7, 2015-Saturday, St. Peter Church Ladies Society 57th Annual Fashion Show and Luncheon, One Hundred Years and Flourishing, at Four Seasons, Westlake Village, CA

ԽՈՐԷՆ ՍԵՖԵԱՆԻ ՅԱԲԱԼԻ ՄԱՅՐՈՒԱՆ ԲԱՌԱՍՆՕՐԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Երբ հարազատ-բարեկամի մահուան գուժ ենք լսում կամ տեղեկացում, տխրում եւ ցաւում ենք, ակնթարթօրէն մտածել է տալիս, թէ՛ -վա՛յ, մէկն էլ պակսեց մեր շրջապատից, նրան չենք տեսնի այլեւս, խօսք ու գրոց չենք անի, իր սիրալիր ներկայութիւնը չենք վայելի, այսպիսով ամէն ինչ դառնում է յուշ եւ ավստասանքով յիշում նրա մեկնումը, այո՛, սիրելիին կորցնելը վշտալի է:

Ինչպէս գիտենք մարդկային կեանքը ժամանակաւոր է, այսինքն Աստուծո օրը գնալու ենք այս աշխարհից եւ վերջ է տրուելու մեր երկրային կեանքին, որպէսզի անակնկալի չմատնուենք մահուան վերահաս հանդիպումից պէտք է կեանքը շահել եւ վայելել, այնպէ՛ս ապրել, որ բարութեամբ յիշուենք, բարի արարքներով իմաստաւորենք մեր կեանքը, թէ՛ անձը պայծառացնելով, լուսաւորելով եւ թէ՛ սրտեր գրաւելով մեր առաքինի վարքով ու ծառայութեամբ, որով բարի նպատակներով բարի յիշատակներ թողնենք մեր յետնորդերի սրտերում եւ մտքերում, այսպիսով գալիքներին խրախուսենք դէպի բարին, ազնիւը, լուսաւորը:

Ահա՛ եւ այսպէս, մեր խորէն Սեֆեանը յետ կարճատեւ հիւանդութեան իր մահկանացուն կնքեց Յունիսի 30-ին մեծ ցաւ ու վիշտ պատճառելով ընտանեկան կազմին եւ շրջապատին: Տեսակցութիւն, յուղարկաւորութիւն եւ թաղումը կատարուեց յուլիսի 11, 2015 թիւ, հոծ յուղարկաւորների ներկայութեամբ Hollywood Hills Forest Lawn գերեզմանատնում՝ մեր հայոց եկեղեցու հոգեպարար արարողակարգով: Եկեղեցում, տեսակցութեան ընթացքում, հանգուցեալի Օդէթ դուստրը ջիւղ ու վճիտ հայերէնով ընթերցեց իր պաշտելի հօր կենսագրութիւնը՝ յուզումնախառն:

Հոգեճաշի հիւրասիրութեան ճաշարահում ներկայ էին գտնուել մեծաթիւ սգակիրներ, ներկաներից ոմանք արտայայտուեցին դրուատելով նրա ապրած կեանքը՝ հայ մարդու արժանիքներով օժտուած:

Հանգուցեալը ծնուել էր 1931-ին Իրանի Բուրվարի գաւառի Սանգէսֆիտ գիւղում, հայրը՝ Շամիրզա, մայրը՝ Հայկանուշ: Նա ընտանիքի կրտսեր գաւակն էր ունենալով չորս քոյրեր: Նա իննը տարեկանում կորցնում է հօրը, սակայն արժանաւոր մօր՝ հանգուցեալ Հայկանուշի հոգատարութեան ներքոյ շարունակում է իր պատուաւոր կեանքը:

Խորէնը պատանի տարիքից սկսում է աշխատել: Նա ապագայի յառաջադիմութեան յոյսերով Թեհրան է տեղափոխուում, արհեստի է հետեւում, դերձակութեան գործ է սկսում: Ծանօթանում է օր. Սաթեհնիկ Ալլահադատեանի հետ, ամուսնանում են, միասնական քաղցր սիրով կեանք են սկսում, ապագայի բարի նպատակներով ու երազանքներով, նրանք, երկուստեք աշխա-



տասիրութեամբ բարեկեցիկ կեանք են ստեղծում իրենց սեփական դերձականոցով եւ յետագային առեւտրի գործարքով: Նրանք բախտաւորում են երեք գաւակներով՝ Ռաֆֆի, Օդէթ եւ Վիտլիթ: Ուսումնասէր ծնողների նուիրութեամբ գաւակները բարձր ուսում են ստանում, Ռաֆֆին ՝ Յ. Թովմասեան « միջնակարգ դպրոցից շրջանաւարտ լինելով պաշտօնական արտօնութեամբ Ամերիկա է մեկնում բարձրագոյն ուսման համար, նա դառնում է դեղագործ բժիշկ ունենալով իր սեփական դեղատունը: Հանգուցեալի գաւակները ամուսնացած են եւ ունեն երեխաներ:


Խորէնը կնոջ հետ 1992 թ. Իրանից գաղթում են Ամերիկա իրենց որդի՝ Ռաֆֆիի մօտ: Նա գոհ իր կեանքից ապրում էր խաղաղ ու հանգիստ ընտանիքի ջերմ յարկի ներքոյ վայելելով կնոջ եւ գաւակների գորովագութ հոգատարութիւնը, երջանիկ ծնողներ գիտակից գաւակներով շրջապատուած:

Նրա դստեր՝ Օդէթի ասուլիութեամբ. « Հայրս մեր կեանքը լցրեց անսահման սիրով, ոչ մի ջանք չինսպելով բարեկեցիկ ու ապահով կեանք ստեղծելու իր ընտանիքի համար: Հայրս ապրելով օտար երկրում քարոզում էր սէր եւ կարօտ դէպի հայրենիքը: Նա հաւատում եւ յոյսով էր լցուած, որ Հայաստանը պիտի ծաղկի եւ ետ կանչի իր պանդուխտ գաւակներին: Հայրս անգամներ ճամբորդել է Հայաստան եւ կարեցածին օգտակար է եղել: Նա այն եզակի մարդկանցից էր, ով սիրուած եւ յարգուած էր թէ՛ տնում եւ թէ՛ շրջապատում: Նա համեստ էր ու գուսպ, ասելիքը մտածուած էր ու տեղին, հաւասարակշռուած ու իմաստաւոր, նա չունէր բարեպաշտ իրթութիւն, սակայն ունէր դատելու շնորհք եւ տրամաբանութիւն: »

Ամենքս ենք այս ունայն աշխարհից հերթով գնալու՝ մէկը շուտ, միւսը ուշ: Խորէնը 84 տարեկանում թողեց կեանքը պայծառ ու բարի անուն եւ յիշատակ թողնելով ապրողաց: Թող որ Աստուած նրա հոգուն խաղաղութիւն եւ իր յարգելի ընտանեկան կազմին մխիթարութիւն, համբերութիւն եւ արեւշատութիւն պարգեւի, ամէն:

Յովհաննէս Մկրեանի Մահը

Յաւով տեղեկացանք մահը՝ «Մասիս» հաւատարիմ ընթերցող եւ Հալէպի Կիլիկեան վարժարանի եւ Հայաստանի մէջ տարբեր ծրագիրներու բարերար Տիար Յովհաննէս Մկրեանի, որ պատահած է Յուլիս 4-ին Ֆիլատելֆիոյ մէջ, 86 տարեկանին:



Հանգուցեալի յուղարկաւորութիւնը կատարուած է Յուլիս 17-ին Սբ. Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Եկեղեցու մէջ: Այս առթիւ «Մասիս» իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկին Շուշիկին, գաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՄՊԱՆԱՅԻ ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐ

Շաբաթուաթուած էջ 13-էն

միասնական կամքով: Այդ տարիներին Օսմանեան կայսրութիւնում բնակուում էին յոյներ, քրդեր, այլ քրիստոնեաներ ու այլ էթնիկ խմբեր, որոնք չենթարկուեցին կանոնաւոր բնաջնջման, ինչպէս հայերը: Ինչո՞ւ է պայմանաւորուած այս հարցը:

Նախ հարկ է հաշուի առնել այն բացառիկութիւնը, որ ներկայացնում է ցանկացած ազգի ներքին քաղաքական պայքարը, այն դէպքում, երբ արտաքին թշնամու դէմ պայքարում առաւել հեշտ է ռեպրեսիւ միջոցներ ձեռք առնել:

Երկրորդ՝ հարեւան Ռուսաստանի սպառնալիքը Մեծ պատերազմի կոնտեքստում եւ նրա կապը հայերի հետ, ինչպէս նաեւ հայերի նախկին կապը պարսիկների հետ ի նպաստ Ռուսական կայսրութեան վախ էր յարուցում թուրքերի մօտ, քանզի հնարաւոր էր վերջիններիս առաջխաղացումը արեւելեան սահմանագծով՝ փակելով նրանց առջեւ Մերձաւոր Արեւելքի դռները:

Երրորդ, հենց արտաքին ուժերի հետ ամուր կապերի բացակայութիւնը, մասնաւորապէս՝ Ռուսական կայսրութեան հետ ոչ բաւականին սերտ կապը, ստեղծեց հայերի անօգնականութեան իրադրութիւն:

Հայերը մշակութապէս տարբերակուող խումբ էին, այնուամենայնիւ, որպէս այդպիսին միակը չէին: Նրանց իւրայատկութիւնը պայմանաւորուած է տարրերի միաձուլմամբ. Նախ հարկ է նշել կազմակերպուած էլիտայի առկայութիւնը սեփական նպատակների շուրջ՝ որպէս պատմական գարգացման հետեւանք, ինչպէս մեկնաբանեցինք վերը, որը գտնելու էր իր նպատակների իրականացու-

մը ներկայիս Հայաստանի Հանրապետութեան տեսքով: Եւ երկրորդը Օսմանեան կայսրութեան համար պատմական խաչմերուկում գտնուելն էր: Այսինքն՝ հայ ժողովուրդը դարձաւ թուրք էլիտայի նախագծի գոհը պատմական իրադրութիւնների հետեւանքով, որոնց մասին խօսեցինք:

Ներկայիս թուրքիայի ազգային հարցը այս խնդրի ուղղակի հետեւանքն է, Հայոց Յեղասպանութեան առկախ ճանաչումը թուրք իշխանութիւնների կողմից կամ քրդական հարցը. առաջ են գալիս ներկայիս թուրքական հանրակարգային համակարգի համատեղելիութեան խնդիրներ՝ ազգային բազմազանութեան պայմաններում: Ժամանակակից թուրքիայի հիմնադիր ուղենիշը այդ իրադարձութեան արդիականացումն է, հետեւապէս դժուար է կապել ներկայիս թուրքական ազգային գիտակցութիւնը այս սարսափելի դէպքի ճանաչմանը, քանի որ ներկայիս ազգային գիտակցութեան մանրակրկիտ հարցադրման ենթակուում է ենթադրում: Ի տարբերութիւն գերմանական պետութեան, որ չի հիմնուում որպէս ազգութիւն նացիզմի վրայ, թուրք ժողովուրդը վերագրուող միանշանակ ազգային չափորոշիչներ: Մինչ ազգայնականների շարժումները, թուրք ժողովուրդը աւելին չէր, քան Օսմանեան կայսրութեան էթնիկ մեծամասնութիւն, ինչի հետեւանքով ժամանակակից թուրքիայի նախահայրերի հարցը այսօր արդէն կարող է դիտուել որպէս մարտահրաւէր ողջ թուրք ազգութեան կառուցին այն պահին, երբ երկրում կան ներքին հակասութիւններ, որ դեռեւս լուծում չեն ստացել:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂՁԱՆՔ

Հաւատաւոր Հ.Մ.Մ.ական եւ «Մասիս» շաբաթաթերթի ընթերցող Պրն. Գրիգոր Նիկողոսեան վերջերս ենթարկուած է վիրաբուժական յաջող գործողութեան մը եւ այժմ հանգստեան շրջանը կը բոլորէ իր բնակարանին մէջ:

Արագ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք մեր հաւատաւոր ընկերոջ:

«Մասիս»

ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՂԱԻՐ ԵԱՆՉՅԱԻ

Շաբաթուաթուած էջ 7-էն

գիրի նախաբանի հօր ձեւակերպման»: Դատաւորը նաեւ գրած է, որ երբ պետութիւնը շարունակաբար կ'ոտնահարէ իր կազմէն դուրս եկած բնակչութեան իրաւունքները, ապա

մէկ այլ պետութեան համար օրինական է ռազմական գործողութեան ձեռնարկումը՝ ի նպաստ անջատուած բնակչութեան, վերջինիս կողմէ իր տարածքին մէջ վերահսկողութիւն հաստատելու եւ իր անջատումը հռչակելու ետք:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

ՅՈՒՍԵՓ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Շարունակում է էջ 15-ին

պատճառներից մեկը միգրացիայի իրենց գերդաստանի հարազատները կորցնելու վախն է տարբեր երկրներում, թեկուզ նույն քաղաքում, քանի որ բոլոր հարազատները չեն համաձայնում գնալ այդ քաղաքին:

Հեղինակը անհանգստացած է նաև սփյուռքահայության կեցուցածքով անկախ Հայրենիքին օգնելու հարցում, նշելով, որ Հայրենիքի բարգաւաճման համար օգնությունը չպետք է կապել երկրի կառավարող պաշտոնեականների հետ, նրանք անցողիկ են, Հայրենիքը՝ յաւերժական («1994-Հայրենասիրությունը, Ազգային Պարտադրությունը եւ Սփյուռքահայեր», էջ 148):

Որպէս գրականագետ՝ հեղինակը գտնում է, որ հայ ազգի գոյութեան երաշխիքը հայոց լեզուն է («1994-Յաւերժի ճամբորդը՝ Մեր Լեզուն», էջ 151): Ինչպէս լուրջ հայրենասէրները և ազգասէրները, Նալբանդեանը նույնպէս անհանգստացած է սփյուռքի հայերով, որոնք քրիստոնեայ երկրներում շատ արագ են կորցնում իրենց լեզուն՝ սեփականացնելով տուեալ երկրին, որի պատճառով վերանում է նրանց մօտ հայերէն լեզուամտածողութիւնը եւ աստիճանաբար թուլանում է նաև հայրենասիրութեան ու ազգասիրութեան գզգզմունքները:

Երկրների, նահանգների, քաղաքների, վայրերի անունները իրենց իմաստով հսկայական ուսումնասիրութեան նիւթ է, որը կատարուած է հեղինակի կողմից բարեխղճօրէն:

Պրն. Նալբանդեանը անհանգստացած է նաև հայի հայերէն գիրք կարդալու հարցով («1997-Կարդալու Անհրաժեշտութիւնը», էջ 185), դրա հետ կապուած՝ նաև Հայաստանից սփյուռք արտագաղթածների և սփյուռքի ընտանիքների ունեցած գրքերի գրադարաններով, նկատելով, որ գրադարանների գոյութիւնը ժամանակակարգ է, քանի որ իրենց սերունդը հիմնականում սովորելով ամերիկեան դպրոցներում, դաստիարակուած է ամերիկեան հոգեբանութեամբ եւ մտածելակերպով ու հեռանում իր ար-

մատներից, իսկ գրադարանները...:

Յիշատակման արժանի է հեղինակի յուշերը իր ծննդավայր Հալէպում հօր ունեցած «Հալէպ՝ տպարանի մասին («1998-Պատմութիւն Սուրիոյ Հայ Տպարաններում», էջ 192), որի մէջ հասակ է առնում ապագայ գրականագէտը՝ մասնակցելով տպագրող գրքերի հաւաքմանը (կազմելու համար): Սա մեզ յուշում է, որ նրա մօտ սէրը դէպի գրականութիւնը սկսել է հենց հօր տպարանում՝ շփուելով շրջապատի մտաւորականների ու այնտեղ եղած գրքերի-բառարանների հետ, որոնց բազմաթիւ թուաքանակը գրադարում է այժմ հեղինակի գրադարանը:

Տուեալ գիրքը Յովսէփ Նալբանդեանի կողմից «կառուցուած» հայի ցաւով, տառապանքով, միամտութեան գերաստիճանի խաբկանքով, անհամբերաշիւ, իրար նկատմամբ անհանդուրժողութեամբ

թշնամական վերաբերմունքով, ապացուցում է այն փաստը, որ հայերս այսօր ապրելիս կը լինէինք մեր բնօրրաններում, եթէ թոյլ տուած չլինէինք նշուած անուղղելի սխալները. որոնք, դժբախտաբար, այսօր էլ շարունակուած են: Նշանակում է, մենք դաս չենք առնում մեր պատմութեան ցաւալի անցեալից, շարունակելով ամուր կառչած մեր ԵՍԻՆ եւ մեր փառասիրական եւ շահադիտական ձգտումներին՝ չմտածելով Հայաստանի Անկախ Հանրապետութեան եւ հայութեան միասնական պայքարով հասնել մեր նպատակների իրականացմանը...:

Հեղինակը «սիրահարուած» լինելով գրքին՝ նրա իմաստի վեհութեանն ու հասկացողութեանը, բարի, ուսեալ, բարեխիղճ, ցանկացող, բարութիւն անող, բարեսէր մարդու գարգացման ու ձեւաւորման հիմնական աղբիւրը համարում է գիրքը, որը չհաշուած բացառութիւնները, կարգացող մարդուն միշտ լուսաւոր

ուղեցոյց է հանդիսանում («1999-Գրադարանի Բառարանները», էջ 195), «2001-Գրադարանի Գիրքերը», էջ 222): Երանի թէ մարդկանց միջից ի սպառ վերանային նախանձը, փառասիրութիւնը, անպարծութիւնն ու ցուցամուրթիւնը, որի արդիւնքում մարդկութիւնը կ'ունենար լրիւ ուրիշ աշխարհ:

Գրքի բոլոր յօդուածները արժէքաւոր են, բայց նկատի ունենալով տպագրող թերթերի սեղմ սիւնակները մենք անդրադարձանք դրանց միայն մի մասին ...:

Յովսէփ Նալբանդեանի «Կեանքի շարունակող շաւիղներ» գիրքը ընթերցողին մղում է դէպի գիրք կարդալը, որ նա գարգանայ ու բարի հոգիով ազնիւ մարդ դառնայ:

Շնորհաւորում ենք հեղինակին՝ 2015-ի Մայիսի 14-ին Երեւանի ազգային գրադարանում սույն գրքի շնորհանդէսի ժամանակ իրեն շնորհուած «Յակոբ Մղդապարտ» մետալի առիթով:

Գրաւում թուական

Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ Սեպտեմբեր 20, 2015

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30			



Armenian Independence Day FESTIVAL

To reserve your booth please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան (818) 391-7938

«ՓՈՔՐԻԿ ԶՐԵՇՏԱԿՆԵՐ»

Շարունակում է էջ 15-ին

առաքելութեան մէջ: 3 մասից բաղկացած շքեղ յայտագիրը լի էր գեղեցիկ արտասանութիւններով, երգերով ու հաճելի կատարումներով: Ձեռնարկին ներկայ հիւրերից «Հայաստան ծառատունկ» ծրագրի պատասխանատու Անահիտ Ղաբրիբեանը, որպէս բազմամեայ համագործակցութեան եւ բարեկամութեան նշան՝ վարժարանի տնօրինութեանը յանձնեց յատուկ վկայագիր: Վերջում, տնօրէնը ներկայներին տեղեկացրեց, որ ընդառաջ գնալով ծնողների բազմաթիւ դիմում-խնդրանքներին՝ սկսած 2015-16 տարեշրջանից դպրոցի ուսումնառութեան տեւողութիւնն աւելանալու է եւս մէկով՝ դառնալով վեցամեայ, իսկ նոր ուսումնական տարուան մեկնարկը լինելու է Օգոստոսի 22ին:

«Փոքրիկ Հրեշտակներ» Շարաբօրեայ Դպրոցի Մամլոյ Դիւան